№ 265 ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2

1906

ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2 № 265

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԵԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԱՌԱՋԻԿԱՅ **1907**-ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՑԱՒԷՏԱԼԻ ԼՈՒՐ

Ցաւէտարարում ենք ի գիտութիւն հայ հասարակութեան մեր սիրելի քաջամարտիկ ընկեր՝

ԽՆՈՒՍՑԻ ՄՈՒՇԵՂԻ

նահատակութեան տարեդարձը, որի առիթով կիրակի, դեկտեմբերի 3-ին, Վանքի մայր եկեղեցում պատարագից յետոյ կը կատարվի հոգեհանգիստ։ Խնդրում ենք հոգևորականներին և հանգուցեալի յիշատակը յարգող հայ հասարակութեանը ներկայ գտնվել հոգեհանգստին։

Վանեցի Մարտիրոս և իր ընկերները

հ. շ. 2—2

ԲԱՑՎԱԾ Է ՆԱԵՒ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1907 Թ.

ԽԱԹԱԲԱԼԱ

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

Տարեկան գինն է՝ Թիֆլիսում 4 ր.				Ուրիշ տեղեր՝ 5 ր.։		
Կէս տարվայ	»	»	2 ր.	»	»	2 ր. 50 կ.
3 ամսվայ	»	»	1 ր.	»	»	1 ր. 25 կ.
1 ամսվայ	»	»	— 40 կ.	»	»	— 50 կ.

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ի տարեկան բաժանորդները 1907 Թ-ին, բացի 50 № թերթից ՁՐԻ ստանալու են. 1) գունաւոր ՏԱԽՏԱԿ—ՕՐԱՑՈՅՑ, 2) միջակից խիստ շքեղ պատկեր՝ զանազան գոյներով տպված, 11×8 վերշոկ մեծութեամբ, որ ծառայելու է որպէս պատից կախելու ԶԱՐԴ—ՊԱՏԿԵՐ և 3) մի «ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ», մօտ 200 միջակից երեսներից բաղկացած, ուր մտնելու են եւրոպական և ռուսական նոր երգիծաբանական գրողների լաւագոյն գրուածքներից նմուշներ։

Ընդունում ենք ամէն լեզուներով յայտարարութիւններ։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Хатабала».

Խմբագիր-Հրատարակող՝ Աստ. Երիցեան

(ու. կ. ե.) տու. 4—20

Թիֆլիսի գործակատարների փոխադարձ օգնութեան ընկերութեան

ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Խնդրում է փոխատուութեան ժամանակամիջոցը անցկացրած պ. պ. անդամներին շտապել վճարել իրանց պարտքը։ Սրանով վերջին անգամ յիշեցնում է՝ որ եթէ մինչև 15-ն դեկտեմբերի 1906 Թ. չեն բարեհաճիլ վճարել լիովին, վարչութիւնը ստիպված կը լինի դիմել ամենավճռական միջոցի թէ պարտապանների և թէ նրանց երաշխաւորների վերաբերմամբ։

(շ. ե.) 1—2

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Բազմամեայ ընկերութիւն, որ զբաղվում է կեանքի դժբախտ դէպքերի ապահովագրութեամբ

Եկամուտների եւ դրամագլուխների ապահովագրութեան

ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնված 1835 թուին

Ընդունում է ապահովագրութիւններ ամենազանազանակերպ պայմանների և դրութիւնների, աննշան գումարներից մինչև 200,000 ր. մի անձի վրա։ Ապահովագրողների մասնակցութիւն ընկերութեան գործերում և եկամուտներում, ապահովագրական վկայականների պայմանաժամի յարատևութիւն։ Ապահովագրական գումարների վճարում, ինքնասպանութեան դէպքում։ Ճանապարհորդութիւնների անսահմանափակ իրաւունք։ Ապահովագրութեան դադարեցման, գրաւ դնելու և ատրման ժամանակ ամենաշահաւէտ պայմաններ։

Պահեստի և այլ դրամագլուխներ 38,000,000 րուբլու.

Մանրամասն տեղեկութիւններ, ընկերութեան կանոնադրութիւնները և հաշիւները, ինչպէս և ընդունելութեան ցուցակներ, յայտարարութիւնները և այլն, կարելի է ստանալ ձրի

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Тифлисъ. Барятинская ул., № 6, телефонъ № 415.

3—10 տու. (կ) Գլխաւոր ներկայացուցիչ՝ Բ. Գ. Կրասնեանսկի

Կիրակի, դեկտեմբերի 10-ին, առաւօտեան ժամը 11 ին, նշանակված է արտիստական շրջանում մէջ

Հայոց Դրամատիկական Ընկերութեան

Ընդհանուր արտակարգ ժողով

Զբաղմունքների առարկաները.

1) Հանգուցեալ դերասան Պետրոսեանի ընտանիքն ապահովելու խնդիր.
2) Դրամատիկական ակումբի մասին զեկուցում.
3) Հայկական Թատրոնի պատմութիւն կազմելու խնդիր.
4) Դերասան՝ Թուրեանին մահարձան կանգնելու խնդիր.
5) Հաւլաբարի Թատրոնում ներկայացումները շարունակելու կամ վերջացնելու խնդիր.
6) Դրամատիկական ընկերութեան ֆինանսական դրութեան հարց.

(2. 7. 10.) տու. 1—3

Թիֆլիսի Արտիստական Ընկերութեան դահլիճում

դեկտեմբերի 10-ին կը կայանայ

ՀԱՄԵՐԳ

Յօգուտ Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան

Համերգից յետոյ կը լինեն

ՊԱՐԵՐ

(շ.) տու. 1—1

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԹԱՏՐՈՆ

Շաբաթ, դեկտեմբերի 2-ին,

Հայ դրամատիկ ընկերութեան խումբը

կը ներկայացնի

Գարնանային հեղեղ

դրամա 4 արար. Կոսորոտովի, Թարգ. Տէր-Աւետիսեանի

Սկիզբը երեկոյեան ժամը ճիշտ 8-ին է

Վարչութեան հերթապահ անդամ Կ. Շիրինեան

Ռեժիսեօր Յ. Աբէլեան

1—1

Արտիստիկ Ընկերութեան Թատրոն

Երկուշաբթի, դեկտեմբերի 4-ին

ՀԱՅ ԴՐԱՄԱՏԻԿ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ

Գր. ՄԻՒՍԵԵԱՆԻ բենեֆիսին

կը ներկայացնէ

I

ՍԱԼՈՄԷ

Ուայլդի դրաման 1 արար., Թարգ.

ՆԷԼԵԱՆԻ

II

ՔԱՂԱՔԱՑԻ ԱԶՆՒԱԿԱՆ

Մոլիէրի կոմեդիան 5 արար., Թարգ.

Վ. ՏԻՐԱՑԵԱՆԻ

Պարերը տրվում են պ. ԻՆՈՁԵՆՑԻԻ ղեկավարութեամբ

[illegible] յօրինել է պ. ՄԻՐԶԱՅԵԱՆ

Սկիզբը երեկոյեան ժամը ճիշտ 8-ին է

Տեղերի գները սովորական են

Վարչութեան հերթական անդամ Մ. Մուրադեան

Ռէժիսեօր՝ Յ. Աբէլեան

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՍԱՓՐԻՋ“

հումօր, սատիրիկ-սիմվոլիք ամսաթերթի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Լոյս տեսաւ

IV-րդ համարը,

ժամուլի տակ են և շուտով լոյս կը տեսնեն V-րդ համարի հետ նաև

„ԱՆԻ“

հրատարակչ. ընկեր. գեղարուեստական բաց նամակների I սերիան

Բաժնեգինն է պրէմիաներով 2 րուբ., իսկ Անդրկասպեան երկրի և արտասահմանի համար 2 րուբլի 50 կոպ.։

Հասցէ՝ С. П. Б. Казанская 46, 18.

«ՍԱՓՐԻՋ»-Ի խմբագրութիւն

ե. շ. տու. 14—25

ԼԱԿՏՕԲԱՑԻԼԵԱՆ ԿԱԹ

ՊՐՈՖ. ՄԵՉՆԻԿՈՎԻ

Ցուցմունքների համաձայն պատրաստվում է

ՊՐՈՎԻԶՕՐ

Ս. Ս. ԿԼԵՐԱՆՍԿՈՒ

Խիմիկօ-բակտերիոլոգիական կաբինետում, Վօրոնցովի արձանի դիմաց։

Հեռախօս № 389.

(կ.) տու. 7—10

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ալէքսանդրօ-Նևսկի եկեղեցուն կից.

Միքայէլեան փող. № 139, տելէֆօն № 817.

Հիւանդների ընդունելութիւնը ամէն օր, բացի կիրակի օրերից։

Բժ. Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—Ներքին հիւանդութ. երեքշաբթի և հինգ. օրերը, ցեր. 11—12 ժամը։

Տ. Ի. ՐՈՒԴԵՆԿՕ—Ներքին հիւանդութ. շաբաթ օրերը 12—1 ժամը։

Ս. Ս. ՎԻՐՍԱԼԱՁԷ—Ներքին հիւանդութ. երկուշաբթի և ուրբաթ։

ՕՐԲԵԼԻ—Ջղային հիւանդութ. երկուշաբթի և ուրբաթ օրերը, 12—1ժամը։

Ի. Ն. ՏՈՒՄԱՆՈՎ—Կանացի հիւանդութ. երեքշաբթի և ուրբաթ 11—12 ժամը։

Մ. Գ. ԿԻՄՕՆՏ—Վիրակապութեան հիւանդութ. երկուշաբթի և հինգշաբթի օրերը 11—12 ժ.։

Ս. Ա. ՌՕԶԱՆՕՎ.—Քթի, ականջի և բկի հիւանդութիւններ, չորեքշաբթի և ուրբաթ օրերը, 11—12 ժ.։

Հիւանդանոցի կառավար. բժ. Ա. Ս. ԱԼԱԴՕՎ, ներքին հիւանդութ. ամէն օր 10—11 ժամը։

(կ.) տու. 4—10

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Անաստասէվսկայա փողոց, տուն № 18, հեռախօս 966։

Հիւանդ կանանց ընդունելութիւնը ամէն ժամանակ նախօրօք յայտարարութեան համաձայն։

Երթևեկ հիւանդների ընդունելութիւնը ամենայն օր ցերեկվայ ժամը 11—12 հետևեալ բժիշկների ձեռքով.

Ա. Ր. Ֆիշեր.—երեքշաբթի, շաբաթ։
Ա. Գ. Բարսուկով.—չորեքշաբթի։
Ա. Պ. Շահ-Պարոնեան.—կիրակի, հինգշաբթի։
Ա. Ա. Նովիցկի.—երկուշ. ուրբաթ։

Երեխաների հիւանդութիւնների համար Ն. Զ. Ուլիկովը հիւանդ երեխաներին ընդունում է երկուշաբթի և հինգշաբթի օրերը, 2—3 ժ.։

Հիւանդանոցին կից կատարվում են քիմիկօ-միկրոսկոպիական հետազօտութիւններ՝ մէզի, խորխի և այլն։

Ստնտուների քննութիւն, սրսկումն նայլնի.

9—10

ՄԱՍՆԱԳԷՏ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԵՐԹԵՒԵԿ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալեքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կոպ.

Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը առ. ժ. 11—5 ժ. եր.

Բժ. Տ. Ի. ՐՈՒԴԵՆԿՕ.—Ներքին հիւ. հինգշ., կիր. 3—4 ժամ.

Բժ. Ֆ. Վ. ԶՈՒԴՆՕՎՍԿԻ.—Վիրաբուժ. հի. երկ., ուրբ. 2—3 ժ.

Բժ. Մ. Ի. ԽԱՆՋԵՎՍԿԻ.—Ականջի, քթի և բկի, չորեքշ., ուրբ., կիր. 2—3 ժ.

Բժ. Վ. Վ. ՎՆՈՒԿՕՎ.—Վիրաբուժ., միզասեռ. երկ., հինգ., շաբ. և կիր. 2—3 ժ.

Բժ. Ն. Մ. ԱՍՊԻՍՕՎ.—Քթի, բկի և ականջի, երկ. երեք. և շաբ. 1—2 ժ., հինգ., կիր., 12—1 ժ.

Բժ. Վ. Գ. ԲՈԺՕՎՍԿԻ.—Ներքին հիւանդութ. ամենայն օր 4—5 ժ.

Բժ. Ա. Ն. ՏԵՏՐԱՁԷ.—Հաշուի, վեներ. ամենայն օր 1—2 ժ.

[illegible] շաբ., կիրակի, կանացի երկուշաբթի, հինգշ., 1—2 ժ., ուրբ. 12—1 ժ.։

Բժ. Ա. Ա. ՄՕՆՍԷ.—Ներքին, երեխ. երեք., հինգ., շաբ. 4—5 ժ.

Բժ. Ա. Տ. ՌՕԶՄԱՐԻՆՍԿԻ.—Երեխ., չորեք., շաբ. 11—12 ժ. երկ., ուրբ. 1—2 ժ.

Բժ. Ն. Ի. ՆԷՈՒՑՄԻՆ.—Աչքի, երկ., երեք., չոր., ուրբ., շաբ., 11—12 ժ.

Բժ. Ա. Ա. ՆՈՎԻՑԿԻ.—Կանանց, երեխ., չոր., կիր. 12—1 ժ., երեք., ուրբ. 1—2 ժ.

Բժ. Զ. Ֆ. ՆԻՎԶՕՐՕՎ.—Ատամի հիւ. 11—1 ժ. ամենայն օր.

Բժ. Կ. Մ. ԳԻՎԱՐՍԿԻ } Կլինիքական անալիզ
Բժ. Կ. Ի. ԶՈՒԴՆՕՎՍԿԻ }

Բժ. Գ. Իւ. ՕՆՕՇԿՕ.—Բժշկ. գիմն. մասսաժ, էլեկտր. 4—6 ժամ.

Մ. Ե. ԳՕՐՕԴՑՕՎԱ.—Մասաժ. 11—4. ժ.

Ս. ԵԱ. ՊԱԻԼՕՑԿԻ.—Վիրաբ. 12—1 ժ. ամենայն օր, կիրակի օրը 4—5 ժ.

Վ. Ի. ԻՆԱԵՎ.—Ներքին, 11—1 ժ. երկ., երեք., չորեք., ուրբ., կանանց 1—2 ժ. հինգշ., շաբաթ., կիրակի։

Բժշկական խորհուրդներ, մասսաժ, սրսկել, անզգայացնել, անալիզի ենթարկել, հիպնօզել, ստնտուների և ծառաների քննելը—ըստ համաձայնութեան։

տու. (ա. օ.) 15—144

ԵՐԿՐՈՐԴ ԱՃՈՒՐԴ

ՁԻՐԱՇԷՆԻ ՍՈՒՐԲ ԱՒԵՏԵԱՑ եկեղեցական հոգաբարձութիւնը տալիս է կապալով հետևեալ եկեղեցական կալուածները, որոնք գտնվում են նոյն եկեղեցու գաւթում.

1) Մի խանութ։
2) Մի խանութ, սենեակով և նկուղով։
3) Մի նկուղ (ПОДВАЛЪ) խանութների տակը։
4) Մի լայնածաւալ նկուղ ուսումնարանի դասատների տակ։
5) Մի բնակարան ուսումնարանի վերի յարկում, բաղկացած 8 սենեակից 2 խոհանոցով, ջրով և բոլոր յարմարութիւններով. սենեակները կարելի է բաժանել 2 մասի՝ չորս սենեակ. երկրորդ աճուրդը լինելու է 3 դեկտեմբերի 1906 Թիւ Ջիրաշէնի ուսումնարանի դրասենեակում ժամի 12-ին։

1—1

ԲԺԻՇԿ

Տ. Ա. Խասխանեան

ՄԱՍՆԱԳԷՏ՝

Ներքին եւ վեներական

հիւանդութիւնների

Ընդունելութիւն { առաւօտ. 11—1 ժ. / երեկոյեան 5—7 ժ.

Սօլօլակ, Սերգիևսկայա 15, Փրիդօնովի տանը։

տու. (չ.ու.շ.) 15—100

ԲՈՒՖԻՉ ԿԷՖԻՐ

ԲԱԲԱԼՕՎԻ

Վաճառվում է Կովկասի օֆիցերների էկօնոմիական ընկ. մագազիններում և Իսլամշէվի (Երևանեան հրա պարակ) և Ալիխանովի (Վօրոնցովի արձանի դիմաց) քաղցրավաճառանոցներում։

տու. կ. ե. ու. 4—10

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դէպի աշխատանք. Անիի պեղումների շարունակութիւնը. Անկոչ փաստաբան. Պետական Դումայի ընտրութիւնների շուրջը. Կուսակցական սակարկայի մասին. Ագրարական հարցը Անդրկովկասի մուսուլմանական մասում. Թուրք նպաստամատոյց յանձնաժողովը. Թատրոն և երաժշտութիւն. Մի սիւգրիզ եա. Բա ինչ անենք. Իմ պատասխանը գծագրիայի արհեստաւորին. Նամակ Երևանից. Սխրագործութիւնների տարեգրութիւններից. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Եապոնիայի պահանջները. Նամակ Ֆրանսիայից. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԴԷՊԻ ԱՇԽԱՏԱՆՔ

I

Մենք դիմում ենք ինքնապաշտպանութեան գործողներին։

Ծանր էր երեկվայ օրը։ Ձեր հայրենի օջախը, ձեր գիւղը և մարգերը վտանգի մէջ էին։ Գազանային կրքերը խլեցին ձեր ազգակիցներին, վայրենի հրոսակները աւերեցին և թալանեցին տուն ու տեղ։

Պէտք էր պաշտպանել մարդկանց և նրանց տնտեսութիւնը։ Պէտք էր դիմադրել ամբոխի և կատաղի յարձակուածներին։

Դուք հանդէս եկաք իբրև ինքնապաշտպանողական ույժ. դուք անձնուիրաբար վտանգի հրդեհի մէջ ձգեցիք ձեզ և դիմադրեցիք։

Ձեր ինքնապաշտպանութիւնը և ձեր դիմադրութիւնը ինքնըստինքեան շնորհակալութեան և երախտագիտութեան արժանի էին ժողովրդի կողմից։

Եւ ժողովուրդը հերոսացրեց ձեզ, երգեց իր երգերում, օրհնեց իր աղօթքներում, և օժանդակեց իր միջոցներով։

II

Սակայն, վերջացնելով ձեր ժամանակաւոր, հերոսական գործը, դուք պէտք է նորից վերադառնայիք աշխատանքի կեանքին։

Եւ պէտք է չը դանդաղէիք այդ բանը անելու։ Իսկ դուք այդ չարիք։

Եւ ահա որտեղ է ձեր մեծ սխալը, որը պէտք է շտապէք ուղղելու։

[illegible] թէ ձեր ապրուստը ապահովելու և թէ հասարակական հարստութիւնը բազմապատկելու համար։

Իսկ եթէ դուք կը մնաք աշխատանքից դուրս և կը պահանջէք ապրուստի միջոցներ, այն ժամանակ ուրիշները պէտք է պարտաւորված լինեն իրանց աշխատանքի մի մասը ծառայեցնելու ձեզ համար։

Բացառիկ րօպէներում, կարճատև շրջաններում, անշուշտ, պէտք է լինի այդ օժանդակութիւնը. բայց նա չէ կարող շարունակվել երկար ժամանակ, եթէ մանաւանդ մեծ է այն բազմութիւնը, որը պահանջում է այդպիսի օժանդակութիւն։

III

Վերադարձէք դէպի ձեր գութանները։ Վերադարձէք դէպի ձեր արհեստը և աշխատանքը։

Ցինցինատի համաշխարհային օրինակը թող լինի ձեզ համար քաջալերող և խրախուսող։ Հռոմի պատմութիւնը ցոյց է տալիս, որ գութանաւոր Ցինցինատը դարձաւ հասարակական գործող, երբ ազգը այդ պահանջեց. բայց հէնց որ հասարակական պաշտօնեան վերջացրեց իր պարտաւորութիւնները, նա նորից վերադարձաւ իր նախկին պարապմունքին, նա նորից գնաց բանելու իր գութանի մաճը։

Շտապեցէք և դուք աշխատանքի, և ձեր ձեռքերով, ձեր արհեստով պատրաստեցէք ապրուստի միջոցներ ձեզ համար։

Այդ է Թելադրում թէ քաղաքակրթութեան պարտաճանաչութիւնը և թէ ժողովրդական կեանքի տրամաբանութիւնը։

IV

Այլապէս՝ դուք դառնում էք մի ծանր բեռը ազգաբնակութեան վրա, որը առանց այն էլ մեծ ծանրութիւնների և նեղութիւնների ճնշման տակ է գտնվում։

Եւ որ ցաւալին է ու ողբերգականը, դուք, որ երէկ սիրելի և Թանկագին եղբայրներ ու բարեկամներ էիք, դառնում էք ձեր բազմութեամբ կամաց-կամաց աւելորդ սպառողներ, իսկ ժամանակի ընթացքում նոյնիսկ մի պատուհաս ժողովրդի համար, որը անկարող է հանդուրժել այն երկար միջոց ձեզ պահելու։

Մեր խեղճ ժողովուրդը ընդհանրապէս կարիքների և լարված պայմանների մէջ է ապրում և եթէ նա կարողանում է զոհաբերութիւններ անել, դա չէ նշանակում, որ նա կարող է անել այդ զոհաբերութիւնները անվերջ կերպով։

V

Եթէ դուք կը շարունակէք յոյս դնելու ժողովրդի օժանդակութիւնների վրա, իսկ նա կը դժկամակէ ձեզ օգնելու, առաջ կը գան մի շարք Թիւրիմացութիւններ և անպատեհութիւններ, որոնց բազմաթիւ օրինակները արդէն ունենք մեր առաջ։

Եւ արդարև, շատ տեղ մենք տեսնում ենք երեկվայ ժողովրդական բարեկամին այսօր բռնացողի, կեղեքողի դերում։

Մենք չենք Թւում օրինակներ և չենք նկարագրում տխուր տեսարաններ և բաւականանում ենք միայն վարագոյրի եզրը բարձրացնելով։

Դուք երեկվայ ժողովրդական սիրելիներ և հերոսներ, լուրջ նայեցէք դրութեանը և վերադարձէք աշխատանքների կեանքին։

Ամէն մի ուշացած օրը աղէտաբեր է Թէ ժողովրդի և թէ այն գործի համար, որին դուք յարած էիք։

Շտապեցէք օր առաջ։

Դա է փրկարար ճանապարհը։

Ա. Քալանթար

ԱՆԻԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

«Մշակի» № 232-ում ուրախութեամբ իմացանք «Արամազդ» ընկերութեան կողմից Ա. Կրասիլնիկեանի միջոցով խմբագրութեանդ ուղարկած 306 ր. մասին՝ Անիի պեղումների համար. ցանկալի էր, որ հայ հարուստներից այդ գեղեցիկ օրինակին հետևողներ լինէին, մանաւանդ այս տարի և ահա թէ ինչու, պ. Մառի անցեալ տարվայ պեղումները հետաքրքրեցին հայ հասարակութեան՝ տաւած արդիւնքի շնորհիւ։ Անցեալ տարվայ հնութիւնները, յիրաւի, մեծ լոյս կը սփռեն մեր պատմական անցեալի մի շրջանի վրա, որից հասած պատմական տեղեկութիւնները կամ կցկտուր են և կամ հակասական. բայց հնութեան այդ նշխարները իրանք իրանց կապացուցանեն ճշմարտութիւնը և պատմական իսկական ճանապարհի վրա կը դնեն։ Դրա համար կարիք եղաւ մինչև իսկ Պետերբուրգից առանձին մասնագէտ նկարիչ բերել տալ, որի համար և բաւական ծախս եղաւ։

Պ. Մառի հետ ունեցած մասնաւոր խօսակցութիւնից տեղեկացանք, որ յարգելի պրօֆեսօրը եկող տարվայ ամառը վճռել է սկզբից և եթ ձեռնամուխ լինել Անիի ամենագլխաւոր մասի պեղման. այդ մասն է կազմում Անիի Միջնաբերդը, որտեղ գտնվում էր Բագրատունեաց արքունիքը իր բոլոր մասերով, և որպէսզի գործը շատ չը ձգձգվի, նա մտադիր է այդ մասում կատարել ընդարձակ պեղումներ, մեծ Թւով բանւորներ հրաւիրե-[illegible]-ութիւն, և յոյս կայ, որ շատ բան կարող ենք սպասել այդտեղից. ուստի անհրաժեշտ է մեր հասարակութեան զգալի օժանդակութիւնը, որպէսզի յարգելի պրօֆեսօրը կարողանայ գլուխ բերել իր ձեռնարկած գործը և կէս ճանապարհին չը Թողնէ, ինչ որ շատ մեծ ցաւ կը լինի մեզ համար։ Անհրաժեշտ է, որ այս տարի պ. Մառը պեղումները սկսելիս ունենայ ամենաքիչը 4000 ր. այդ գումարից արդէն 300 ր. գտնվում է «Մշակի» խմբագրատանը. բացի դրանից Թիֆլիսում մի պարոն խոստացել էր տարեկան 500 րուբ. տալ. յայտնի չէ թէ Պետերբուրգի Հ. Եկեղ. խորհուրդը, որ միշտ որոշ գումար է յատկացրել այդ գործին, այս տարի արդեօք կարճ է դարձել նպաստել և ծր չափով։

Ուստի սրանով յայտնում ենք հայ հասարակութեան ունևոր դասակարգին, որ նա չը խնայէ իր օժանդակութիւնը պ. Մառին՝ Անիի պեղումների կարևոր գործում. ի նկատի պէտք է ունենալ, որ պեղումների համար ծախսվող փողերը բոլորը մնում են հայ գիւղացիների մէջ, այն չարքաշ ու աղքատ գիւղացիների, որոնք ամէն կարիքից ստիպված Թափում են Անի աշխատելու և մի քանի կոպէկ ստանալու. մեծ զրկանք կը լինի Անիի շրջակայքի հայ գիւղացիների համար, եթէ դադարեն պեղումները Անիում. նոյնիսկ այս տեսակէտից, առում եմ, անհրաժեշտ է, որ օր առաջ օգնութեան գան մեր հարուստները։ Զարմանալի մի երևոյթ եա այն է, որ մեր կրեսոսներից և ոչ մէկը չը բարեհաճեց գոնէ մի աչքի ընկնող գումար նուիրել այդ գործի աջող ընթացքի համար, չը նայելով՝ որ դա նրանց համար մի չնչին գումար կը լինէր, բայց դրանով որքան մեծ բարիք կը լինեն մատուցած մեր փայփայած Անիի անցեալ պատմութիւնը լուսաբանելու։ Հարկաւոր է նաև նկատել, որ չը նայելով Հնագիտական ընկերութեան ցանկութեան՝ ձեռք բերել այդ հնութիւնները, պ. Մառն ասաց, որ ինքը հակառակ է այդ բանին և բոլոր գտնված իրերը կը մնան մեզ մօտ։ Նուիրատուութիւնները կարող են ուղարկել կամ «Մշակի» խմբագրութեան և կամ իրան՝ պ. Մառին «Петербургъ Вас. Островъ 4-лин. 7 кв. 14.

Շահիբէգեան

ԱՆԿՈՉ ՓԱՍՏԱԲԱՆ

—

«Դիտող» անունով մի անկոչ փաստաբան հանդէս է եկել «Երկրի» էջերում ի պաշտպանութիւն Ներսիսեան դպրոցի վարչութեան (№ 50)։ Արդէն այդ անունը, համանիշ անպատկառ ցինիզմի, անպատկառ ստախօսութեան, բաւական է ցոյց տալու նրա պաշտպանութեան արժէքը. արդէն հէնց այդ անունը, որ իր բարոյական հրէշաւորութեան առատ ապացոյցներն է տուել «Երկրի» նախված ճահիճում, բաւական է վարկաբեկ անելու Ներսիսեան դպրոցի վարչութիւնը, որին «Դիտողը» տքնում է արդարացնելու մի քանի ծանր մեղադրանքներից, որ մամուլը և հասաբակական կարծիքը բարդում են այդ վարչութեան վրա։

«Դիտողը», հայհոյանքի բաւականաչափ պաշար չը գտնելով իր պայուսակի մէջ, հարկ է համարել իր օգնութեան կանչել և պ. Լէօին։ Սակայն Լէօնէրի «տակառին» դիմելն անգամ չէ օգնում «Դիտողին», և նա իր անկոչ փաստաբանութեամբ աւելի ծանրացնում է Ներսիսեան դպրոցի այժմեան վարչութեան վրա բարդված մեղադրանքները և ստիպում մեզ ժամանակից առաջ մերկացնել այդ վարչութեան վնասակար գործունէութիւնը։

Ի՞նչ մեղադրանքներ բարձեց մամուլը («Մշակ», «Հոսանք») և հասարակական կարծիքը Ներսիսեան դպրոցի վարչութեան վրա։ Թողնենք առայժմ երկու մեղադրանքի մասին, որ արվեց վերջին օրերս։

Վախճանվեց Արիստակէս Սեդրակեանը, ժամանակակից հասարակական - եկեղեցական խոշոր գործիչներից մէկը, որի մահը ընդհանուր անկեղծ վիշտ պատճառեց հայ ժողովրդին։ Այդ գործիչը եղել է նաև ուսուցիչ Ներսիսեան դպրոցի և երկար տարիներ նրա հոգաբարձութեան նախագահ, ուրեմն նա մեծ երախտիքներ ունի դպրոցի վրա։ Հետևաբար շատ բնական էր սպասել, որ այդ երախտաւորված դպրոցի սաները, ի նշան յարգանքի, կը գնան երգելու նրա թաղման, ինչպէս գնացել էին երգելու հանգուցեալ Պետրոսեանի թաղման։ Սակայն քաղաքի մէջ ամբողջ շաբաթվայ ընթացքում սկսեցին յամառ լուրեր պտտել, որ դպրոցի մի քանի դաշնակցական հոգաբարձուներ և ուսուցիչներ և մասնաւորապէս երգեցողութեան ուսուցիչ դաշնակցական Մ. տրամադիր են, որ յարգանքի այդ ցոյցը Ներսիսեան դպրոցի աշակերտութեան կողմից չանվի Սեդրակեանի յիշատակին։ Եթէ ի նկատի ունենանք, որ Դաշնակցութիւնը դեռ Սեդրակեանի կենդանութեան ժամանակ հալածանք էր յարուցել նրա դէմ և իր պաշտօնական օրգան «Դրօշակը» չէր խղճահարվել նոյն իսկ «դաւաճան» տիտղոսը կպցնել նրա անուան (Սեդրակեանը, ի հարկէ, Աշոտի և ուրիշ նման եպիսկոպոսաց առաջնորդների պէս Դաշնակցութեան զուզուկով պարողներից չէր), հասկանալի կը լինի, որ այդ լուրը և մանաւանդ երգեցողութեան ուսուցիչ Մ.-ի հանգուցեալի հասցէին տրտասանած լպիրշ խօսքերը հաւանական նկատվէին։ Այդ պատճառով էլ թաղման կարգադիր մասնաժողովը արդէն մտածում էր ուրիշ երգեցիկ խումբ հրաւիրել, երբ Ներսիսեան դպրոցի հոգաբարձու թ. Մուրադեանը դրականապէս յայտնեց, որ հոգաբարձութիւնը որոշել է ուղարկել երգեցիկ խումբը։ Այդ պաշտօնական յայտարարութիւնը պատճառ եղաւ, որ ուրիշ երգեցիկ խումբ չը հրաւիրվեց։ Անելով այդ յայտարարութիւնը, հոգաբարձութիւնը չունեցաւ փափկանկատութիւն և ազնւութիւն գէթ մի օր առաջ տեղեկացնել մասնաժողովին, թէ իր որոշումը անգործադրելի է [illegible] կամ աշակերտները չեն ենթարկվում վարչութեան անօրէնութեան։ Պարզ է, որ մի առանձին ջանք էլ չէ եղել վարչութեան կողմից յարգել տալ իր որոշումը, եթէ նա միայն կայացել է։

Ի՞նչով են կամենում այժմ արդարացնել աշակերտների և հոգաբարձութեան վարմունքը։ Նրանով, թէ 1) երգեցիկ խումբը չէ գնում եկեղեցի և 2) դպրոցը յատուկ եկեղեցական խումբ չունի։ Եւ երբ այդ ծիծաղելի պատճառների դէմ հասարակութիւնը և մամուլը առարկում են, թէ այն աշակերտները, որոնք ձրիաբար և ազգի հաշւով ուսումն են առնում ազգային-հոգևոր դպրոցում, բարոյական ոչ մի իրաւունք չունեն այդպէս վարվելու, թէ աշակերտների մէջ այդպիսի վարմունք թելադրողը և ներշնչողը եղել են դաշնակցական ուսուցիչներ, որոնք իրանց թայֆայական շահերը գերադաս են համարել դպրոցի շահերից, երբ առարկում են, թէ դպրոցի հոգաբարձական և ուսուցչական խումբը չունի ուրեմն ոչ մի բարոյական հեղինակութիւն աշակերտների վրա—այդ բոլոր առարկութիւններին պատասխանում են մեզ լկտի հայհոյանքներով և հին երգով, թէ դուք հոգաբարձութեան դէմ գրում էք, որովհետև դուք չէք ընտրվել, թէ դուք կղերական էք, բուրժուա և այլն։

Իսկ փաստը, փաստի դէմ ի՞նչ էք ասում. փաստը մնում է այն, որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը և տեսուչը ոչ միայն չը կատարեցին իրանց խոստումը, չը յարգեցին իրանց որոշումը, այլ և արգելք հանդիսացան ուրիշ տեղից երգեցիկ խմբի գալուն. փաստը մնում է այն, որ այդ դպրոցի երախտաւորված աշակերտութիւնը տուեց սև ապերախտութեան մի փառաւոր ապացոյց, իսկ ապերախտութիւնը մարդկային զզուելի յատկութիւններից մէկն է. փաստը մնում է այն, որ դուք, դաշնակցականներդ, օգտվելով այն հանգամանքից, որ բախտի բերմամբ և պատահմամբ հոգաբարձու և ուսուցիչ էք, կարողացաք խափանել տալ հրապարակական յարգանքը դպրոցի կողմից մի ականաւոր մարդի վերաբերմամբ։ Չէ՞ որ ոչ ոք չէ հաւատում այն կոկորդիլոսեան արցունքին, որ դուք երբեմն ակամայ ձեր նեխված օրգանում թափում էք Սեդրակեանի յիշատակին։

Երկրորդ փաստը աւելի վրդովեցուցիչ է. այդ փաստը հաղորդեց «Հոսանքը», ես և յիշեցի, բայց «Դիտողը» իր հայհոյանքների ամբողջ կոյտը իմ գլխին է թափում և միայն անցողակի յիշում է «Հոսանքի» անունը։ Այդտեղ էլ նա ջանում է արդարացնել հոգաբարձուներին նրանով, որ նա իրաւունք չունի միջամտել նրանց գործերին։ Որպէս թէ հոգաբարձութիւնը ոչ մի խաբար չունի, թէ աշակերտները այդպիսի գործ են կատարել։ Բայց չէ՞ որ ուղղակի մեղադրանք կայ, (տես նաև երէկվայ «Հոսանք»-ի № 8) որ դպրոցի դաշնակցական հոգաբարձուներից կամ ուսուցիչներից մի քանիսը կազմակերպել են այդ։ Հէնց ամբողջ մեղադրանքի ծանրութիւնն այն է, որ դու օգուտ քաղելով ձեր հոգաբարձու կամ ուսուցիչ լինելուց, անբարոյականացնում էք աշակերտներին և հասցնում նրանց բարոյական այն անկման և ստորութեան, որ նրանք գաղափարը տարածում են փողով…

Այժմ պատասխանեմ միւս կէտերին։

«Դիտողը» թւում է մի շարք գործեր, և բարենորոգումներ, որ կատարել է, որպէս թէ հոգաբարձութիւնը, բայց «Մշակը» դրանց մասին ոչ մի խօսք չէ ասում։ Այդ գործերից ամենագլխաւորը՝ քանդված և այրված շէնքերի կառուցումը ամբողջովին հին հոգաբարձութեան սկսած գործն է և նրա գործունէութեան արդիւնքը։ Ինչ վերաբերում է միւս գործերին, նոր ծրագիր կազմելուն, նոր դասատուներ բանալուն—մենք այդ ամենը համարում ենք «աչքին թող փչել» և ֆէերիական, նոյնիսկ վնասակար գործեր, որովհետև այդ ամենը անելու գլխաւոր դրդիչը՝ դաշնակցականների համար նորանոր չաղ պաշտօններ և ռոճիկներ ստեղծելն է։

Այդ ամենը և աւելին կարող էր ամենայն հեշտութեամբ կատարել և հին հոգաբարձութիւնը, եթէ նա վարվէր այնպէս, ինչպէս այժմ վարվում է նոր դաշնակցական հոգաբարձութիւնը, այն է, եթէ նա ձեռնամուխ լինէր դպրոցի դրամագլուխների և անձեռնամխելի գումարների վատնման։ Դուք չէք նկատում, որ ձեր այդ վարմունքով դպրոցը հասցնելու էք սնանկութեան և փակման։

Վերջապէս, ես ոչ մի հաւատ չունեմ այժմեան հոգաբարձութեան վրա, հէնց այն պատճառով, որ նրա մեծամասնութիւնը թայֆայական է, որի տրտայայտիչ են հանդիսանում Թոփչեանների, Սաժակների պէս մարդիկները, այնքան լուսաբանված է այժմ, որ ոչ ոքի համար այլ ևս գաղտնիք չէ, թէ խեղճ Ներսիսեան դպրոցը, ինչպէս և Ցախեանեան դպրոցը դատապարտված են բարոյական և նիւթական սնանկութեան և քայքայման։

Հ. Ա.

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

—Սօցիալիստ-յեղափոխականների կուսակցութեան բանւորական դաշնակցութեան խորհուրդը հարցադրութիւն է արել մի քանի շրջանների գործարանական բանւորներին Պետական Դումայի առաջիկայ ընտրութիւնների վերաբերմամբ։ Հարցադրումը հետևեալ հետևանքն է ունեցել.

Նարվայի շրջանի մասսան անկուսակցական է և անպայման ցանկանում է մասնակցել ընտրութիւններին։ Նոյն կարծիքին են և միւս կուսակցական բանւորները։ Մոսկվայի շրջանում բանւորները ընդհանրապէս ընտրութիւնների կուսակից են։ Այդ շրջանում [illegible] եռանդուն ագիտացիա են մղում։ Քաղաքային շրջանի բանւորները ընտրութեան կուսակից են, սակայն ոչ ոք մեծ յոյս չէ դնում Դումայի վրա։ Վասիլեօստրովսկի շրջանում ընտրութիւնների կուսակից են։ Նևսկ-թաղային մասում բոլոր բանւորները ընտրութիւնների կողմն են և յայտնում են, որ հարկաւոր է ձգտել, որպէսզի աջակողմեանները չը մտնեն Դումա։ Նոյն միտքն են յայտնում Վիբօրգի և Կոլպինսկի շրջանները։ («Страна»)

—Մուսուլմանների սահմանադրական կուսակցութեան կենտրոնական կոմիտէտը խնդրել է «Р. В.» լրագրին տպագրել իր հետևեալ յայտարարութիւնը. «Կոմիտէտը մշակել է կուսակցութեան կանոնադրութիւնը, որ մօտ օրերս ներկայացվելու է Պետերբուրգի քաղաքագլխին լեգալիզացիա անելու համար։ Բիւրօյի պարտականութիւններից մի քանիսը ժամանակաւոր կերպով յանձնված են կենտրոնական կոմիտէտի Կազանի ներկայացուցիչներին և նրանք էլ իրանց վրա են առել կանոնադրութեան հաստատութեան գործը։ Ներկայ հանգամանքներում մշտական բիւրօն անկարելի էր ընտրել։ Երկրորդ Պետական Դումայի ընտրութիւնների համար կենտրոնական կոմիտէտը մի կոչ է ուղղում մուսուլման ընտրողներին, հրաւիրելով նրանց Դումայի ներկայացուցիչ ընտրել մուսուլմանական սահմանադրական կուսակցութեան անդամներից, իսկ որտեղ դա անհնարին լինի, գործել համերաշխութեամբ միայն այնպիսի քաղաքական կուսակցութիւնների հետ, որոնք ընդունում են Ռուսաստանում ապրող բոլոր ազգերի իրաւունքների կատարեալ հաւասարութիւն և հոկտեմբերի 17-ի մանիֆեստի բոլոր սկզբունքների իրագործումը։ Կենտրոնական կոմիտէտը ընդունել է մի շարք որոշումներ մուսուլման ազգաբնակութեան շահերի պաշտպանութեան համար, ի թիւս որի վճռված է կազմակերպել հրատարակչական ակցիոներական ընկերութիւն «Բիթար» անունով, որի մերձաւոր նպատակն է հրատարակել Պետերբուրգում ռուսերէն լեզուով մի թերթ։ Կանոնադրութեան նախագիծը հաստատվելուց յետոյ կը հրաւիրվի տեղական կոմիտէտների առաջին ընդհանուր պատգամաւորական ժողովը։

—Հոկտեմբերի 17-ի դաշնակցութիւնը ներկայումս ունի 43 նահանգներում 102 բաժանմունք։ Դաշնակցութեանը միացել են. Բաքւում «Նակոր» ընկերութիւնը և ուրիշ քաղաքներից իրաւակարգի ու այլ ընկերութիւններ։ («Тор. пром. газ.»)

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՏԱԿՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ

Արևմտեան Եւրոպայի կազմակերպված պրօլետարիատի ղեկավարները յամառ կերպով շարունակում են խորհուրդներ տալ ռուսաց սօցիալ-դեմօկրատներին ոչ միայն համաձայնութիւն կայացնելու «բուրժուազական կուսակցութիւնների» հետ առաջիկայ ընտրութիւնների ժամանակ, այլ և նրա հետ միասին միացեալ ույժերով Ռուսաստանի մէջ մտցնել իրական կազմ։ Այդ միտքը յայտնեց Գեդը։ Միևնոյն տակտիկան են առաջարկում նորերս լոյս տեսած «Современ. Жизнь»-ի մէջ ֆրանսիական, անգլիական, բելգիական և իտալական բանւորական կուսակցութիւնների այնպիսի ականաւոր ներկայացուցիչներ, ինչպիսին է Պօլ Լաֆարգը, Էդգար Միլիօ, Վանդերվելդ և Անրիկօ Ֆերրի։ Դրանցից առաջինը խորհուրդ է տալիս մեր գիտակից բանւորների ղեկավարներին գործադրել իրանց բոլոր ույժը, ստեղծելու ինքնակալութեան դէմ մի այնպիսի Դումա, որին նա անկարող լինի արձակել։ Անրիկօ Ֆերրին նրանց վրա պարտականութիւն է դնում «յամենայն դէպս օգտակար կերպով գործադրել ինքնակալութեան դէմ բուրժուազական օպպօզիցիայի ույժերը»։ Բայց ամենից աւելի պնդում են բուրժուազական դեմօկրատիայի հետ միանալու և դաշնակցելու անհրաժեշտութեան մասին Էդգար Միլիօն և Է. Վանդերվելդը։ Առաջինը «ակներև» է համարում, որ ինքնակալ բիւրօկրատիայի հակառակորդները պէտք է վատնեն իրանց ույժերը ոչ թէ իրար պատառ-պատառ անելով, այլ իրանց ընդհանուր գլխաւոր թշնամու դէմ կռիւ մղելով։ Վերջապէս Վանդերվելդը յիշեցնում է ռուսաց գիտակից բանւորներին, որ տակտիկայի հարցը այժմ դրվում է բոլոր երկրներում և որ «իսկապէս ամեն տեղ էլ գերակշռում է միևնոյն որոշումը»։

«Երբ բուրժուազական դեմօկրատիան,—ասում է Վանդերվելդը,—մասնակցում է շարժմանը, սօցիալ-դեմօկրատիան գնում է նրա հետ ձեռք ձեռքի տուած» և թողնում է նրան միայն այն դէպքում, եթէ նա կանգ է առնում կամ յետ նահանջում։ «Ես այն մարդկանցից չեմ,—շարունակում է բելգիական բանւորների ականաւոր պարագլուխը,—որոնք սօցիալիզմի «փառաւոր առանձնացումը» համարում են առաւելութիւն այն ժամանակ, երբ խնդիրը վերաբերում է ամբողջ ժողովրդի ազատութեանը, ամբողջ քաղաքակրթութեան ապագային։ Այդ պատճառով, ես կարծում եմ, որ, չը նայելով բուրժուազական դեմօկրատիայի բոլոր թերութիւններին, նա այնուամենայնիւ մնում է անհրաժեշտ գործօն ազատագրական շարժման համար, որի մէջ շահագրգռված է ոչ միայն պրօլետարիատը, այլ և ինքնակալական բիւրօկրատիայի բոլոր զոհերն ու թշնամիները»։

Ռուսաց սօցիալ-դեմօկրատիայի նշանաւոր տէօրետիկներից մէկը, որ գրում է Ն. Բելտով կեղծ անունով, «Соврем. Жизнь»-ի մէջ քննադատութեան է ենթարկում այդ կուսակցութեան պարագլուխների տակտիկան։ Նա գրում է.

«Պրօլետարիատի պարագլուխները վերջին տարվայ ընթացքում արել են շատ այնպիսի բաներ, որ չը պէտք է անէին, և որ նրանք, անշուշտ, չէին անի, եթէ որ կարողանային համաձայնեցնել իրանց միջոցները իրանց նպատակներին։ Մեր պրօլետարիատի «ինտելլիգենտ» ղեկավարների տակտիկայի աչքի ընկնող գլխաւոր գիծը կայանում է, նրանում, որ նա ամենևին չէր համապատասխանում իրանց տրամադրութեան տակ եղած ույժերին։ Նա ամբողջապէս հիմնված էր այդ ույժերի չափազանցման վրա»։

Բէլտովի կարծիքով մեր սահմանադրական շարժման սկզբներում ռուսաց սօցիալ-դեմօկրատները կանգնած էին հետևեալ հակադրութեան առաջ.

«Կամ նրանք կը մտնեն նրա մէջ շատակելու նրա զարգացումը պատշաճաւոր ուղղութեամբ և դրանով էլ լաւ գործ կատարած կը լինեն և վճռական դեր կը խաղան, և կամ թէ նրանք, յանուն իրանց դօկտրինեօրական «լօզունգների», կը մնան առանձնացած, և, գտնելով դասակարգական տզանդ, պատմութիւնը նրանց մի կողմ կը հրէ, իբրև այնպիսի մարդկանց, որոնք չեն հասկանում իրանց սեպհական սկզբունքները»։

«Պրօլետարիատի իդէօլոգները իրանց այն ժամանակվայ մեծամասնութեամբ գերադաս համարեցին թիկունքները դարձնել դէպի այն ժողովրդի շարժումը, որին նրանք ուզում էին հաւատացնել իրանց լօզունգների գերազանցութեան մասին»։

«Եւ պատմութիւնը արդարև նրանց մի կողմ նետեց», աւելացնում է իր կողմից «Рѣчь» լրագիրը, քաղուածաբար առաջ բերելով վերոյիշեալ կտորը Բէլտովի յօդուածից։

«Мос. Ежене.»-ում մի հետաքրքրական խօստովանութիւն է անում իշ. Եւգ. Տրուբեցկօյը խաղաղ վերանորոգութեան կուսակցութեան տակտիկայի մասին։

«Աւաղ,—ասում է նա,—մի որևէ «ճշմարիտ և կայուն» տակտիկայի մասին չէ, որովհետև այդպիսին գոյութիւն չունի, այլ նրա մասին, թէ ինչ պէտք է անենք մենք այժմ։ Ես համոզված եմ, որ այժմ, երբ մենք գնում ենք Դումա և պատրաստվում ենք պառլամենտական գործունէութեան համար, կռուի հակասահմանադրական միջոցները պէտք է դէն ձգել իբրև օպպօզիցիայի ույժը թուլացնող։ Կարող են գալ ուրիշ, աւելի վատթար ժամանակներ, երբ մենք կը զրկվենք Դումայից և կը կորցնենք բոլորովին քաղաքական իրաւունքներ իրագործելու հնարաւորութիւնը. այն ժամանակ խաղաղ վերանորոգութեան կուսակցութիւնը ևս, ուրիշների նման, ստիպված կը լինի կռուի համար անսահմանադրական միջոցներ ընտրելու»։

Ուրեմն «վատթար հանգամանքներում» խաղաղ վերանորոգութեան կուսակցութիւնը ևս կը դիմի անսահմանադրական միջոցների կռիւ մղելու համար։

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ՄԱՍՈՒՄ

Ժամանակակից Ռուսաստանը ստիպված է ամեն տեղ էլ քաւել հին կարգերի սխալները, թէ իր տան մէջ և թէ ծայրերկրներում։

1846 թւականի դեկտեմբերի 6-ի հրովարտակով Նիկոլայ I կայսրը իրաւատէր արեց Երևանի, Գանձակի և Բաքւի նահանգի թուրքերին, նոյնպէս և Թիֆլիսի մուսուլմանական մասի «բէգերին և աղալարներին», այսինքն այն կառավարութիւնների չինովնիկներին, որոնց մենք փոխարինել էինք։ Նա այդ բանն արեց կոմս Վօրօնցովի խնդրանօք մուսուլմանական բարձր դասակարգը Ռուսաստանի հետ շաղկապելու համար։ Մինչև այդ բէգերն ու աղալարները վարչական պաշտօնեաներ էին, այլ ոչ կալուածատէրեր։ Գիւղացիները նրանց վճարում էին պետական հարկերը, բայց ոչ անհատական տուրքերը։

Կէս դար առաջ նոյնպիսի մի սխալ գործել էր և անգլիական կառավարութիւնը Հնդկաստանում։ Լորդ Կօրնվալլիսը մօնղոլական նախկին իշխանների հարկահաններին ընդունելով իբրև հողային սեփականատէրեր, հաստատել էր նրանց վրա այն հողամասերը, որոնք առաջ հասարակական սեփականութիւն էին կազմում։

Ժամանակին թէ անգլիացիները և թէ ռուսները ստիպված եղան ազատել իրանց ձեռքով ստրկացած ազգաբնակութիւնը։

Մուսուլմանական Անդրկովկասում այդ կատարվեց 1866 թւականին։ Հարկ եղաւ գնել գիւղացիական ազատութիւնը, գնահատել բարշչինայի արժէքը, որոշել վարձատրութեան չափը կեղծ կալուածատէրերին, նրանց կեղծ հասանելիք տուրքերի համար։ Սակայն [illegible] կեղծիքը ունեցաւ իր շահաւէտ կողմը։ Նա բէգերին և աղալարներին դարձրեց անհամեմատ աւելի զիջող, քան թէ Վրաստանի ազնւականներն էին։ Չը մտնելով տեխնիկական մանրամասնութիւնների մէջ, որ կարող էին դժուարութիւն պատճառել ընթերցողին, կը նկատեմ միայն, որ գիւղացիների շինարարութեամբ զբաղվող կոմիտէտին աջողվել է իւրաքանչիւր արական սեռին պատկանող հոգուն յատկացնել 5 դեսեատին հողաբաժին, որ հողի բաժանումը կատարվել է ոչ թէ ծխի, այլ առանձին իւրաքանչիւր չափահասի վրա, որպիսին համարվում էր ամեն մի 15 և աւելի տարեկան երիտասարդ, վերջապէս՝ որ տուրքի չափը կալուածքներից շատերում որոշված էր բերքի մի տասներորդի հաւասար։

Այդ բոլորը միասին առած, մեր հարաւային ծայրերկրի գիւղացիներին դրեց անհամեմատ լաւ պայմանների մէջ, քան թէ նախկին վրաց թագաւորութեան գիւղացիներն ունէին, և բաւականաչափ լուսաբանում է այն պատճառը, որի շնորհիւ Անդրկովկասի այդ մասում, ներկայ խռովայոյզ ժամանակներում, մենք վկաներ ենք հանդիսանում ոչ թէ գիւղացիների ու կալուածատէրերի ընդհարումներին, այլ շինական բնակիչների ու քաղաքացիների, որոնց խոշոր մասը կազմում են հայերը։ Երբ 1873 թւականին ձեռնարկեցին որոշելու յետ գնման չափը, հիմք ընդունեցին դրա համար հետևեալը. գիւղացիների համար գլխահարկ (Личная денежная повинность) կալուածատէրերի նըկատմամբ ընդունվել էր բերքի մի քառորդական մասը հաւասար և գնահատվել էր 30 կոպէկ։ Այդպիսով բերքի մի տասներորդի հաւասարվող ամբողջ տուրքը (оброкъ) տալիս էր դրամի վերածելով 1 ր. 20 կոպէկ., իսկ երկու տուրքերը դրամի վերածելով 5 տոկոսից դուրս էր գալիս, որ մի դեսեատին հողի միջին տեսակի գինը Անդրկովկասի մուսուլմանական մասում յետ գնելու համար միջին թւով գնահատված էր 25 կամ 26 ռուբլի կոպէկներով, նայելով թէ որ նահանգումն է կամ որ գաւառում։

Վերջնական որոշում, թէև, մինչև այժմ էլ չէ ընդունված։

Դաղստանի շատ գիւղերում գիւղացիները փաստօրէն այլ ևս բէգերին ոչինչ չեն տալիս, ոչ մէկ տուրք չեն վճարում և, այդ պայմանները 9 տարուց աւելի է, որ ստեղծվել են։ Մի քանի բէգեր գանգատ են ներկայացրել ադմինիստրացիային, բայց [illegible] չեն դիմել վախենալով ապստամբութիւն առաջ բերել։

Ուղղակի իբրև անախրօնիզմ է մնում մինչև այժմ էլ այն «կէշկօլ» տուրքը, որ Զաքաթալայի շրջանում վճարում են մի շարք լեզգի գիւղերի օգտին։

Նոյն տուրքը վճարում է և այդ շրջանի վրացի ազգաբնակութիւնը, որը մի ժամանակ հպատակ լինելով լեզգիներին ենթարկվել է իր տեսակի այդ հողային տուրքին։

Ակներև է, որ այդ տեսակ կարգերը վաղուց արդէն վերացված պէտք է լինէին։ Դրանց ոչնչացումը, մեր կարծիքով, առանձին դժուարութիւն չէ ներկայացնում, յետ գնել չէ պահանջում, այլ միայն պէտք է վերացնել։

Որքան մենք լսել ենք, Կովկասում հողերը յետ գնելու ամբողջ գործողութիւնը մօտաւորապէս հաշւելով գանձարանից կը պահանջէ 27,5 միլիօն ռուբլի [illegible]։ Այդ ծախքը թոյլ կը տայ վերացնելու ֆէօդալական իրաւազրկութեան մնացորդները ամբողջ Անդրկովկասում թէ քրիստոնեաների և թէ մուսուլմանների մէջ։ Երկրի խաղաղացումը և երկրագործութեան ու գիւղական տնտեսութեան զարգացումը մեր հարաւային ծայրերկրում, հասկանալի է, կրկնակի կը վարձատրէին այդ ժամանակաւոր զոհաբերութիւնը։ Պարզ է, սակայն, որ մի այդպիսի էական կարևորութիւն ունեցող ռեֆորմը և այն ծանր բեռը, որ ընկնում է, թէև գոնէ ժամանակաւորապէս, ամբողջ ռուս ժողովրդի վրա, չեն կարող կատարվել այլապէս, բայց եթէ Պետական Դումայի մասնակցութեամբ։ Իրաւ է, ժամանակակից կառավարութիւնը ի չարը գործ դնելով հիմնական օրէնքների 87-րդ յօդուածը թոյլ է տալիս իրան ուկազներով յեղափոխել մեր գիւղացիական հողատիրութեան կազմը անգամ, համայնականից ու ծխատիրականից դարձնելով մասնաւոր, բայց այդպիսի մեկնութիւն տալ հոկտեմբերի 17-ի մանիֆէստին, որ խոստանում է այսուհետև այլ ևս ոչ մի օրէնք չը հրատարակել առանց Դումայի, այն սոսկալի կամայականութիւն է, որ հազիւ թէ հարկ կայ ասելու, որ նրանք անօրինական են։

Շատ գործեր կան, որոնց վերջնական լուծումը պատկանում է մեր ժողովրդական ներկայացուցչութեանը։ Կարելի է երկիւղ կրել, որ նրանց թւում, թերևս առաջին կարգում, գրված չը լինի Անդրկովկասի հողային բարենորոգումների խնդիրը։ Դա, սակայն, կը լինէր վտանգաւոր սխալ։

Ժամանակը չէ սպասում։ Շարունակվող խառնակութիւնները թուլացնում են ժողովրդի յարգանքը դէպի իշխանութիւնը և հարևաններին ներշնչում են այն միտքը, թէ կարելի է նոր արիւնով ողողել այն գաւառները, որոնք մեր տիրապետութիւնից առաջ գտնվել են Բարձրագոյն Դրան և Պարսկաստանի փաստական կամ նոյնպէս և իրաւաբանական գերիշխանութեան ներքոյ։ Որպէսզի ընդմիշտ նըւաճած լինենք նրանց, և ռուսաց պետութիւնը և եւրոպական կուլտուրան պէտք է շտապեն շուտով վերջ տալ նրանց մէջ գոյութիւն ունեցող հին անազատութեան բոլոր հետքերը և երկրի գիւղական ազգաբնակութիւնը դարձնել իրաւահաւասար միւս դասակարգերին, նոյնպէս և ապահովել նրանց հողի կողմից։ Ներկայ ագրարական անկարգ վիճակից դուրս գալու համար ես ուրիշ ելք չեմ տեսնում, և չի էլ կարող լինել։ («Страна»)

Մաքսիմ Կօվալևսկի

ԹՈՒՐՔ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Երէկ քաղաքային Դումայում տեղի ունեցաւ Շուշու աղէտեալներին օգնող նպաստամատոյց յանձնաժողովի նիստը։ Երկար խորհրդակցութիւններից յետոյ յանձնաժողովը որոշեց հետևեալ հարցերը.

1) Պէտք է ուղարկել Նպաստամատոյց Յանձնաժողովի նախագահ Հ. Զ. Ա. Թաղիեվի ստորագրութեամբ հետևեալ հեռագիրը Շուշու կարեւոր կէտերը. «Լսելով սոսկալով այն սովի ու թշուառութեան մասին, որ առաջ է եկել ձեր մէջ, իբրև արդիւնք հայ-թուրքական ընդհարումների, Բաքւի ձեր եղբայրները տխրեցին, սգացին, և սկսել են եռանդուն ջանքեր գործ դնել, միջոցներ ձեռք առնել։ Մի բազմամարդ ժողովում վճռվեց, որ ձեռնարկվի անմիջապէս նպաստների հաւաքման։ Այդ նպատակով էլ կազմվեց մի Նպաստամատոյց Յանձնաժողով։ Հանգստացրէք ժողովրդին, վստահացնելով նրան, որ շուտով կուղարկվեն նպաստներ։

Նախագահ յանձնաժողովի

Թաղիեվ

2) Յանձնաժողովը ընտրեց իր միջից Ահմէդ-բէգ Աղայեվին, Մահմէդ Հասան Հաջինսկին, Կարա բէգ Կարաբէգովին և Հասանովին, որ մի ընդարձակ ծրագիր և գործելու եղանակ մշակեն Նպաստամատոյց Յանձնաժողովի համար։

3) Նպաստները (փողով կամ իրերով) պէտք է հաւաքվեն առանձնապէս Զէյնալ-Աբեդին Թաղիեվի գրասենեակներում և «Իրշադ»-ի ու «Каспій»-ի խմբագրատներում։ Բացի այդ յանձնաժողովի անդամները պէտք է անդորրագրեր բաժանեն հոգևորականների և ոչ-հոգևորականների, որպէսզի աշխատեն իրանց կողմից նպաստներ հաւաքելու։

4) Պէտք է խնդրել Փոխարքայի միջնորդութեամբ ճանապարհների և հաղորդակցութեան մինիստրութիւնից, որ նպաստներն ուղարկելու համար յանձնաժողովի տրամադրութեան տակ դրվեն 25 վագօն։

5) Ծանուցանելով Կովկասի բոլոր վայրերում Նպաստամատոյց Յանձնաժողովի կազմութեան մասին, հրաւիրել ազգաբնակութեանը նպաստներ ուղարկել։ Այդ նպատակով բաց անել Կովկասի գլխաւոր կենտրոններում Նպաստամատոյցի մասնաճիւղեր։ Դրա համար ուղարկել պատուիրակներ Ահմէդ-բէգ Աղայեվին, Աբաս-աղա Հաջիեվին Դաղստանի, Հիւսիսային-Կովկասի և Անդրկովկասի քաղաքները, իսկ Շուշում նպաստները բաշխելու համար ուղարկել Իսա-բէգ Աշուրբէգովին, Բէհբուդ աղա Ջիւանշիրին, Լուտֆ Ալի-բէգ Բէհբուդովին և Մուխթար-բէգին։

6) Առանձին նամակներ ուղարկել Թիֆլիսում Շէյխ-ուլ Իսլամին և Մուֆթիին, Վլադիկավկազում ղօկտ. Դոլխանովին, փաստաբան Շինաևին, Աշխաբադում Թահիրովին, Նաջաֆ Ղուլի Աղային և խնդրել որ աջակցեն նպաստների հաւաքման։

7) Ուղարկել Հաշիմ-բէգ Վեզիրովին Աշխաբադ և Խօրասան այդ տեղերում Նպաստամատոյցի մասնաճիւղեր բաց անելու համար։

8) Ահմադ-բէգ Աշուրբէգովից խնդրել, որ շարունակէ նպաստ հաւաքել Բաքւի շրջակայ գիւղերում և կազմակերպել մասնաճիւղեր, իր ազատ կամքով իր համար ընտրելով աջակիցներ, օգնականներ։

Արդ, ով մահմեդական ժողովուրդ։ Ժամանակ է օգնութեան և պաշտպանութեան։ Մեր կրօնի հիմքն է կազմում ողորմութիւնը, շնորհը, օգնութիւնը մեր սեպհական եղբայրներին։ Ղուրանի ամեն մի հատուածում, ամեն մի էջում լիքն են փրկարար և ողորմած այաթներով, օրինակ «Աստուած հրամայում է արդարադատութիւն և ողորմութիւն.», «Օգնեցէք և պաշտպանեցէք միմեանց անապատում»։

Մէկ մտածեցէք։ Երկու հարիւր հազարից աւելի եղբայրներ ձիւնապատ լեռներում, սառցապատ ձորերում քաղցած, ծարաւ, մերկ, անտուն և անօթևան են մնացել, խեղճացել։ Նրանք ընկել են ծայրայեղ կարիքների մէջ։ Միթէ այդ բոլորը առաջ չեկան ազգի պաշտպանութեան համար։ Միթէ վայել է, որ մեր օգնութիւնը խնայենք նրանցից, որոնք մեզ համար զոհեցին և՛ կեանք, և՛ առողջութիւն, և՛ տուն ու տեղ, և՛ ընտանիք ու զաւակներ։ Էլ ո՞ր են մեր եռանդը, մեր պատիւը, մեր կրօնն ու փառքը։ Էլ մենք ո՞ր ժամանակի մահմեդական եղբայրներ ենք։

Մէկ երևակայեցէք այդ ցուրտ լեռներում թափառող երեխաներին և մերկ, քաղցից հարուածված մարդկանց։

Ո՛վ միլիօնները սնտուկներում դիզող և մեծ եռանդով ու զգուշութեամբ պահող հարուստներ, վախեցէք Աստուծոյ բարկութիւնից, Մարգարէի անէծքից ու ազգի զայրոյթից։ Այն օրից, երբ ազգդ սկսէ նեղվել, նա բռնութեամբ կը յափշտակէ ձեզանից այն փողերը, որ դուք գործ էք դնում շռայլութիւնների, զեխութիւնների համար, նա ձեզ կը զրկէ այն բիւրաւոր հաճոյքներից, որոնցից պարտ էք բաժին հանել ազգին։ Միթէ բարձրեալն Աստուած այդ հաճոյքները չէ սահմանում և ազգի կարօտեալներին, խեղճերին ու աղքատներին։ Յիշեցէք, որ հանդերձեալ աշխարհում, Մարգարէի առաջ, դուք հաշիւ պիտի տաք, և պիտի դատապարտվէք ամօթի և անէծքի։ Այդքան գծծութեամբ ձեր պահած փողերը բաժին պիտի դառնան Սարատովի պոռնիկներին, Մարանդի մուղբուլներին (պարող կանայք և մարդիկ), Թիֆլիսի գինետներին և խաղամոլ աղաներին։ Իսկ ձեզ պիտի մնայ ամօթ ու անէծք։ Բայց ինչո՞ւ չէք ուզում ձեր հինգ օրվայ կեանքից օգուտ քաղելով Աստուծոյ ձեզ պարգևած բարիքներից ուրիշների համար էլ բաժին հանել և վաստակել Աստուծոյ հաւանութիւնը, Մարգարէի հաճութիւնը և մարդկանց սէրը։ Միթէ ձեր ազգի, ձեր տների, ձեր փողերի պաշտպանութեան համար չը մեռան, չը դժբաղդացան այդքան մահմեդականներ։

Եւ դուք, ո՛վ աշխատաւորներ, արհեստաւորներ, գրողներ, գթացէք և ձեզանից ամեն մէկը թող շտապէ իր կարողութեան համեմատ օգնել ձեր եղբայրներին։ Թող տայ, ով ինչ կարող է։ Ամաչելու ոչինչ չը կայ. Ներկայ դէպքում շատ և քչի հարց չէ կարող լինել։ Րոպէն կարեկցութեան, եղբայրութեան րոպէ է։ Որքան ուզում է թող լինի նպաստը, բաւական է որ լինի սրտով և համաձայն կարողութեան։ Թող զգեստ ունեցողը զգեստ տայ, փող ունեցողը՝ փող, ալիւր ունեցողը՝ ալիւր և ցորեն ունեցողը՝ ցորեն։ Բոլորն էլ հարկաւոր են, բոլորին էլ կարիք է զգացվում։

Բայց ի սէր Աստուծոյ շուտ։ Որովհետև հայերը՝ ինչպէս ամեն գործում, նոյնպէս և այս դէպքում փութկոտ հայերը արդէն 3 ամիս առաջ կարգադրել են այս գործերի համար անհրաժեշտը, հաւաքել են և բաժանել են նպաստներ, որոնք տեղացել են և բարելաւել են իրանց եղբայրների դրութիւնը։ Իսկ մենք միայն այժմ ենք մտածում, այժմ, երբ ձմեռը վրա է գալիս և կարիքն իր գագաթնակէտին է հասել։ Բայց եթէ շտապենք և ջանք ու եռանդ չը խնայենք, կարող ենք շատ վերքերի սպեղանի գտնել, շատ հոգիների փըրկել դժբաղդութիւնից, սովից և մերկութիւնից։ Ո՛ն, յառաջ, մահմեդական ժողովուրդ։ («Իրշադ»)

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Հինգշաբթի, նոյեմբերի 30-ին, Թիֆլիսի հայ դրամատիկական խումբը ներկայացրեց Բիսսօնի «Պատմական Դղեակ» պիեսը, երեք գործողութեամբ։

Դա ֆրանսիական մի ֆարս է, որ խաղացվեց մեծ աշխուժութեամբ և աչքի անսամբլով։

Դերասանական կազմի մեծագոյն մասը մասնակցում էր ներկայացման։

Հասարակութիւնը, որ լցրել էր թատրոնը, բուռն ծափահարում էր դերասաններին։

Ֆարսը ուսանելի կողմեր չունէր, բայց գոնէ ազատ էր կասկածելի և անբարոյական տարրերից, որոնցով այնքան առատ են լինում ֆրանսիական ֆարսերը։

ՄԻ ՍԻՒՐՊՐԻԶ ԵՒՍ…!

Ն.-Նախիջևան, նոյեմբերի 24-ին

Հայկական կեանքը լի է զանազան սիւրպրիզներով։

Այո, ինչ որ սպասվում էր վաղուց՝ կատարվեցաւ։

Նոր-Նախիջևանի թեմական դպրոցի վերջին երեք դասարանները փակվեցին ամսիս 21-ին։

Ուսման ծարաւ հայ մանուկները, անօթի ու անտուն փողոց նետվեցին «անտէր» ու «ազգասէր» վարչութեան շնորհիւ։

Անցեալ տարվայ ընդհանուր աշակերտական շարժման անմասն չէր մնացել և Նոր-Նախիջևանի աշակերտութիւնը։ Նա երկար տարիների ընթացքում ենթարկված «իսկական հայ մարդկանց» քմահաճոյքին՝ արձագանք տուեց ընդհանուր աշակերտութեան կոչին, ցանկութիւն յայտնեց մի փոքր ազատ շունչ քաշել, թօթափել գործով ապիկար և խելքով տհաս մանկավարժների արջային խնամքը. այդ մասամբ նրան աջողվեց, թէև ոչ առանց կորստի. աշակերտներից շատերը վտանգի ենթարկեցին իրանց ապագան։

Անցաւ անցեալ ուսումնական տարին, անցան ամառային արձակուրդները, և աշակերտութիւնը տոգորված գաղափարի կուռով, հանդիսաւոր հոգով ոտք կոխեց դպրանոցի շէմքը, հրճուելով այն մասնաւոր ազատութեամբ, որ ձեռք էր բերել իր իւրաքանչիւր ընկերոջ ապագայի գնով։ Առաջին օրերը աջող էին՝ աշակերտների իրաւունքներին ձեռնամուխ չէր լինում կեղտոտ ձեռքը։ Իսկ յետոյ՝ Աշակերտութիւնը սկսեց զգալ ու նկատել, որ չար ամպեր են հաւաքվում, որ դպրանոցի մթնոլորտը թանձրանում է։ Աշակերտի «ճակատագրի տնօրէնները» զանց էին առնում նրա իրաւունքները ու դրա փոխարէն, իբրև աշակերտի և ուսուցչի յարաբերութեան չափ՝ ցոյց տուին իրանց կամայականութիւնը։

Հէնց այդ անմիտ ու յանցաւոր կամայականութիւնը պատճառ հանդիսացաւ երեք բարձր դասարանների փակման։

Եղելութիւնը այս է։

Սրանից մի քանի շաբաթ առաջ երկար ու ծանր հիւանդութիւնից յետոյ թեմական հիւանդանոցում վախճանվեց աշակերտ Կէժբէջեանը։

Աշակերտութիւնը որոշեց օգտվել այդ հանգամանքից ու թաղման հանդիսի ժամանակ, եկեղեցում, [illegible] առաջ ամբիոն բարձրացաւ, իբրև աշակերտութեան ներկայացուցիչ՝ աշ. Փօղոսեանը։ Անշուշտ, նա չը պէտք է դիմէր հանգուցեալ ընկերոջ սանտիմենտալ ու անբովանդակ փրազներով։ Աշակերտութիւնը պարտաւորեցրել էր նրան ամբողջ հասարակութեան առաջ նկարագրել թեմականի ներքին կեանքը, և հրաւիրել հասարակութեան անտարբեր հայեացքը այն բոլորի նկատմամբ, ինչ որ կատարվում էր դպրանոցի պատերում։

Իսկ կատարվում էր շատ բան. երեան էր եկել վերին աստիճանի տգեղ երևոյթ, որ ակներև փաստ էր թեմականում մեծ դեր խաղացող — վերակացու Զուբարեանի ստոր և բարոյական սնանկութեան ու կատարեալ անտակտութեան. փաստ էր և այն, որ այդ վատաշուք ու կրքոտ արարածին, յանդգնել էր պաշտպանել ու պաշտպանում է մինչև այժմ թեմական դպրանոցի հոգաբարձական խորհրդի նախագահ—Նոր-Նախիջևանի թեմի յաջորդ և Քրիստոսի ծառայ՝ Մուշէ վարդապետը։ Յիշեալ երևոյթը բացի նրանից, որ վնասում էր դպրանոցին նիւթապէս, նա վնասում էր և բարոյապէս աշակերտներին, որովհետև ապացուցված պոռնիկը, ինչպիսին էր Զուբարեանը չի թողել դպրանոցը.

Հասարակութեան յայտնի չէր այս դէպքը, այլ պտտում էին միայն անորոշ լուրեր։

Այդպէս ուրեմն, աշակերտութիւնը յանձնարարել էր աշ. Փօղոսեանին հրապարակաւ յայտնել իրանց ընկերոջ աճիւնի մօտ այն բոլորը, ինչ որ պէտք է իմանար հայ հասարակութիւնը, այն ամենը, ինչ որ յանցանք էր թաքցնել նրանից, այն, ինչ որ կենդանի փաստ էր վարչութեան տխմարութեան և ապիկարութեան։

Եւ աշակերտութեան ներկայացուցիչը բըսկսեց…

Մուշէ վարդապետի դէմքը յանկարծ այլանդակվեց. նրա լռութիւնը չէր կարող տանել արդարութեան ձայնը. և նա սկսեց ոտքով, ձեռքով, գլխով ու խաչով նշան տալ աշակերտին, որ դադարի։

Բայց աշակերտութեան ներկայացուցիչը շարունակում էր. նա անողոք էր։

Վերջապէս, վերակացուներից մէկի օգնութեամբ [illegible] բռնակալը հասաւ իր նպատակին։

Դատաւորը լռեց։

Անցան օրեր, շաբաթներ և աշակերտութիւնը կարծում էր թէ այդ հարցը վերջացաւ… բայց ո՛չ. այս դէպքում նա չարաչար սխալվեց։

Ցանկարծ լուր է տարածվում, թէ աշակերտ Պօղոսեանը արձակված է դպրանոցից։ Աշակերտութիւնը անմիջապէս բացատրութիւն է պահանջում տեսչի օգնական պ. Ե. Շահազիզից։ Լուրը հաստատվում է, Բարձր դասարանների աշակերտները հաւաքվում են յուզված այդպիսի անարդարութիւնից ու պահանջում են իրանց ընկերոջ վերադարձը։ Վախեցած և գայրացած պ. Շահազիզը ծառաների օգնութեան է դիմում, իսկ յետոյ նոյնիսկ սպառնում է ոստիկանութեամբ։ Քիչ յետոյ դպրանոց է գալիս Մուշէ վարդապետը և ազդարարում, որ եթէ աշակերտութիւնը մի քայլ անի Պօղոսեանի նկատմամբ՝ նա լիազօրութիւն (sic!) ունի դպրանոցը փակելու։

Աշակերտութիւնը պարտական էր անել այդ քայլը ի պաշտպանութիւն իր ներկայացուցչի։ Նա արաւ, ներկայացնելով վարչութեան պահանջ, որ ընդունվի չքմեղ Պօղոսեանը։

Ու Թեմական դպրանոցի վերջին երեք դասարանները փակվեցին։

Եւ վարչութիւնը Մուշէ վարդապետի ու Եր. Շահազիզի առաջնորդութեամբ այժմ կոկորդիլոսի արցունքներ է թափում ու պոռում ամենուրեք, թէ «հայ մանուկը ըմբոստացել է»...

Հասարակութիւնը անտարբերութեան չի՞ մնայ, չի՞ յապաղի իր կարծիքը յայտնել և պատժել յանցաւորներին։

Մենք յուսում ենք...

Տիգրան

ԲԱՑ ՈՒՂ ԱՆՆԵՐ

Բաղվանսարա, նոյեմբերի 21-ին

Ուշի ուշով հետեւելով մեր լրագիրների բանակռիւներին, թղթակցութիւններին և «էքված խորոված» սրտերի նամակներին, որոնք իրանց հոգու փոքրոգութիւններն են ցոյց տալիս, ակամայ միտս է գալիս Թուրքերէն մի տարածված ասացուած, «այի մէջզադն քիսոը, մէջզանի խաղալիսի խօվ» որ թարգմանի՝ «աւլելը անտառից խառնվել է, անտառը տեղեկութիւն չունի»։ Ի՞նչ է, ինչ պատահեց ձեզ, պարոններ և արժ. հայր։

Մէկը գրում է. «Ես եմ եղած «Մշակին» հոգի, կենդանութիւն տուողը». միւսը գրում է. «Ես եմ եղած «Մշակի» հզօր սիւներից գլխաւորը». երրորդը գրում է՝ «որովհետև, «Մշակը» Գրիգոր Արծրունուց յետոյ ընկել է, ուստի ես հեռանում եմ (վա՜յ ձեզ, «Մշակ» կարդացողներիս, բա ինչ անենք...)։ չորրորդը ասում է. «Մշակը» պատճառներ է իրան (իմա—Դաշնակց.—հիւանդ կողմերի բանալն և սպեղանին դնելու, ուստի ես հեռանում եմ»։ Հեռացէք, պարոններ, շուտ հեռացէք, քանի դեռ վաղ է. ապա թէ ոչ, դուք էլ խորխորատ կիջնէք։ Միայն մի խնդիր. շարունակէք «Երկրին» ծառայել, միայն նրանից չը հեռանալու պայմանով, ապա թէ ոչ ամօթ կը լինի ձեզ։

Մ.

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԴԵՄԱԳՕԳԻԱՅԻ ԱՐՀԵՍՏԱՒՈՐԻՆ

III

Մենք ցոյց տուինք արդէն, թէ ինչպէս պէտք է օգտվէ մի ոճի Բիւխերի թէօրիայից, երբ նա ընտրում է ուսումնասիրութեան մի տարբեր օբեկտ, մի տարբեր միջնավայր, քան Բիւխերը, կամ նոյն անտես. միջնավայրի՝ Բիւխերից ոչ լրիւ ու փաստալից չըշօշափված ու լուսաբանված կողմերը։ Դա օգտվելու առաջին եղանակն է։ Սակայն ինչպէս պէտք է օգտվէինք մենք, երբ մեր ուսումնասիրութեան օբեկտը, ընտրած անտես. միջնավայրը տարբեր չէ եղել, այլ նոյն Բիւխերի ընտրածը։

Յիշատակելով մեր գրքոյկի առաջին գլխում մի շարք գիտնականների անտեսական զարգացման թէօրիաները (միանգամայն անկախ Բիւխերի աշխատութիւնից, որի գործը չէ եղել այդ թէօրիաներով զբաղվել), վերջում կանգ ենք առնում Բիւխերի տեսութեան վրա և այն առանձնապէս գնահատելուց և եղածներից բարձր դասելուց յետոյ աւելացնում ենք, որ մենք պիտի ծանօթանանք անտեսական զարգացման փազերի հետ ըստ այդ թէօրիայի (եր. 21)։ Ի հարկէ մեր «բարեխիղճ քննադատը» մի խօսքով անգամ չէ յիշում իր համար միանգամայն անձեռնտու այս կարեւոր յայտարարութիւնը, որը վճռականապէս բացասում է պլագիատի ամբաստանութեան հնարովի ստուերն անգամ։ Եւ ի հարկէ իրաւունք ունէր պ. Աթարբէգեանը իր տեսակէտից անուշադիր թողնել մեր այդ բացորոշ խոստովանութիւնը, քանի որ նա առաջնորդվելով անարակելի կեղտոտ մտադրութիւններով, աշխատել է ամեն կերպ թուածութիւնը իրողութեան ներկայացնել։

Ծանօթանալ որոշ իրի, խնդրի, երևոյթի հետ ըստ որոշ թէօրիայի, նշանակում է ծանօթանալ միաժամանակ այդ թէօրիայի հետ (մենք բերինք օրինակ Մարքսի թէօրիան յաւելեալ արժէքի մասին), որովհետև հէնց այդ իրի, խնդրի, երևոյթի րէալ հիմքերից է, որ մշակվում է այդ թէօրիան, որ կիրարկվում է նրանց վրա այդ տեսութիւնը։ Ծանօթանալ անտեսական զարգացման փազերի հետ ըստ Բիւխերի թէօրիայի, այդ նշանակում է առանց այլևայլութեան ծանօթանալ նաև այդ թէօրիայի հետ։ Իսկ ինչի մէջ է կայանում ծանօթացումը անտեսական զարգացման փազերի և միաժամանակ Բիւխերի թէօրիայի հետ։ Դա նշանակում է Բիւխերի միջոցով ծանօթանալ անտեսական զարգացման դարաւոր ընթացքի աստիճանների հետ։ Դա նշանակում է ծանօթանալ իւրաքանչիւր պատմական շրջանում տիրապետող անտեսութեան ձևի էութեան հետ այնպէս, ինչպէս Բիւխերն է բնորոշում։ Դա նշանակում է Բիւխերի բացատրութեամբ ծանօթանալ անտեսական ձևերի տարբերիչ կրիտեռիումների հետ։ Դա նշանակում է Բիւխերի փաստական լուսաբանութեամբ ծանօթանալ զարգացման փազերի առանձնայատուկ կողմերի հետ։ Ճիշտ այդպէս էլ մենք վարվել ենք։ Բիւխերի գրքի երրորդ գլուխը պարունակում է նրա թէօրիայի տեսական հիմնաւորումը և փաստական լուսաբանութիւնը,—նրա թէօրիայի կիրառումը անտեսական զարգացման փազերի վրա։ Ուրեմն, եթէ մենք «կըրեց ևեթ» ամենայն բացորոշութեամբ յայտարարում ենք, որ մենք պիտի ծանօթանանք անտեսութեան ձևերի, նրանց աստիճանական զարգացման և փոխանցման հետ ըստ Բիւխերի թէօրիայի, ապա պարզ ու լօգիկաբար հետևում է դրանից, որ մենք բացարձակ իրաւունք ունէինք օգտվելու նրա տեսական հիմնաւորումից և փաստական լուսաբանութիւնից, իսկ դրանից օգտվելու համար, իրաւունք ունէինք կտորներ և հատուածներ բերելու նրա գրքից։

Սակայն ընթերցողը կարող է հարցնել, լաւ չէ՞ր լինի այդ դէպքում, եթէ ամբողջապէս թարգմանէինք այդ երրորդ գլուխը և հրատարակէինք իբրև թարգմանութիւն։ Այդ հարցն իրաւունք ունեն տալու միայն նրանք, որոնք մի կողմից չեն կարդացել Բիւխերի գիրքը (այդ գլուխը), իսկ միւս կողմից չեն պարզել իրանց մեր ձեռնարկի նպատակը։ Մեր գրքոյկի ծաւալը թէև բաւականին սահմանափակ, բայց աւելի բազմակողմանի է, քան Բիւխերի գրքի երրորդ գլուխը և մեր ձեռնարկի նպատակը, թէև բաւականին համեստ, բայց շատ աւելի լայն է, քան Բիւխերի նոյն գլուխն է ունեցել։ Ինչպէս չըշտեցինք, մեր գրքոյկի առաջին գլխում քննական դիտողութիւններով բերում ենք մի շարք գիտնականների թէօրիաները,—մի բան, որ Բիւխերի գրքում չը կայ։ Այնուհետև երկրորդ, երրորդ և մանաւանդ չորրորդ գլուխներում մենք աւելի շատ բան ենք ասել, քան Բիւխերը (որովհետև նա այդ ասելու նպատակ չի ունեցել)։ Մինչդեռ Բիւխերը բազմաթիւ աղբիւրներից հաւաքած իր էթնօգրաֆիական հում նիւթերով մասնագիտաբար խորացել է տնտ. զարգ. փազերի նկարագրութեան մէջ, մենք ընդհակառակը օգտվելով միայն նրա տեսական հիմնաւորման և փաստական լուսաբանութեան էական գծերից, միևնոյն ժամանակ ուշադրութիւն ենք դարձրել ուրիշ, մեզ համար աւելի կարևոր հանգամանքի վրա։ Մենք իբրև մարքսիստ-մատերիալիստ (սարսափելի ցոյց կը տանք մեր ապշող քննադատին, թէ ինչպէս է, որ մենք այդպէս լինելով հանդերձ առաջնորդվել ենք մի «սօցիալ-բուրժուա Բիւխերի թէօրիայով») աշխատել ենք ըստ հնարաւորին ցոյց տալ, թէ ինչ ներգործութիւն ունի անտեսական ձևերի փոփոխութիւնը սօցիալական կեանքի, հասարակական - սօցիոլօգիական ստրուկտուրայի վրա, մի բան, որ խոստանում ենք մենք նախաբանի մէջ։ Տնտեսական երեք փազերի մէջ, ամենամեծ չափով երրորդի մէջ, մենք ծանրանում ենք համառօտակի ստորագրութեամբ բարդացող հասարակական օրգանիզմի ծոցում ծնունդ առնող նորանոր երևոյթների վրա՝ անտեսական, սօցիալական և քաղաքական սահմանում,—սօցիալական կոչումներ խաւեր, անտեսական դասակարգեր՝ ֆէօդալներ և ճորտեր, կապիտալիստներ և պրօլետարներ, խոշոր կալուածատէրեր և գիւղացիներ, ապա կապիտալի սկզբնական ակկումուլյացիան, վաշխառուի և վաճառականի կապիտալի փոխադարձ յարաբերութիւնը, դասակարգային պետութիւն, անտեսական - հասարակական հոսանքներ և այլն,—այս բոլորի վրա մենք կանգ ենք առնում համառօտաբար. մի բան, որի առանձնապէս շօշափումը դուրս է պրոֆ. Բիւխերի տեսութեան նպատակից, նրա գլխի երրորդ ծաւալից։ Ի հարկէ, մեր գրքոյկը մի սկզբնական անլրիւ փորձ է այդ ուղղութեամբ. դրանից յետոյ պէտք է անցնէինք սպեցիալացման զանազան սիստեմներին, անտեսական ֆակտորների յաջորդական զարգացման պատմական ընթացքին, եթէ ձեռնարկած չը լինէինք «Մուրճ»-ում մի այլ աւելի կարևոր աշխատութեան։ Կրկնում ենք, ինչպէս որ Բիւխերը հում նիւթերից օգտուել է և տեսական լուսաբանութեամբ սիստեմի վերածել լոկ անտես. ձևերի պատմական զարգացումը, այնպէս էլ մենք օգտվել ենք նրա թէօրիայից՝ համառօտ ակնարկներով լոյս սփռելու սօցիալ- քաղաքական երևոյթների վրա, ձեռքի տակ ունենալով մարքսիստական գրականութիւնը։

Ի հարկէ ձեռնտու չէ համարել մեր պ. քննադատը որ և է բան յիշելու այս բոլորից, որովհետև նա նպատակ չէ ունեցել օբեկտիւ քննելու մեր բրօշիւրը, այլ միայն հայհոյելու։ Նոյնքան ձեռնտու չէ եղել նրա համար համեմատութիւնների մէջ բարեխղճութեան չափ պահպանելը։ Մի քանի նմուշ նրանցից։ Մեր գրքոյկի երկրորդ գլխում ոչ թէ 12 երես, այլ 9 երես, երրորդ գլխում ոչ թէ 9 երես, այլ 5 երես, և ամբողջ չորրորդ գլխում միայն 4 երես ենք օգտուել Բիւխերից։ Ուրեմն մեր 71 երեսանոց բրօշիւրից 17—18 երես (ոչ թէ 25) օգտվել ենք Բիւխերից, այսինքն անհրաժեշտօրէն այնքան, որքան հնարաւոր էր ըստ նրա թէօրիական լուսաբանութեան ծանօթանալ անտես. զարգաց. փազերի հետ։ Այո, օգտվել ենք գրական էտիկայի սահմաններում, ինչպէս այդ ցոյց տուինք։ Եւ ով, այնուամենայնիւ, պլագիատ է անուանում այդ, նա կամ չի հասկանում այդ արուեստը, կամ թէ չէ, ուզում է խայտառակ զրպարտութիւն անել։

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Նոյեմբերի 26-ին

Երևանում աւելացաւ նաև մի միջնակարգ դպրոց-պրոգիմնազիա։ Օրիորդ Վերգինէ Տէր-Սարգսեանը աչքի առաջ ունենալով, որ մէկ իգական գիմնազիան չէ բաւականացնում 25—30 հազար բնակիչ ունեցող Երևան քաղաքի ժողովրդին, բաց է անում այս գիտութեան տաճարը։

Երևանցիներին պարզ յայտնի է և այն փաստը ինչ որ ամեն տարի շարունակ կրկնվում է երկու գիմնազիաներում—երեխաները լաւ պատրաստված քննութիւն են տալիս, բայց որովհետև տեղ չէ լինում, ստիպված են լինում մեծ ծախքերով գնալ օտար քաղաքներ կամ մնալով փողոցում, յաջորդ տարին նորից են պատրաստվում, նորից քննութիւն տալիս և այսպէս անվերջ։ Դրանով տանջվում էին թէ երեխաները և թէ երեխաների ծնողները, միևնոյն ժամանակ գիտութիւնը, ուսումը մնում էր միայն մաչելի ունևոր դասի համար, իսկ աղքատները զուրկ էին մնում այդ բարիքից։ Ինչ խօսք որ ժողովրդի կրթութեան գործը կ իսկական քայլերով էր շարժվում։ Այդ վիճակը չէր կարող հոգաբարձութեան տարկայ չը դառնալ։ Եւ ահա այդ [illegible] միսսիան իր վրա առաւ օր. Վ. Տէր-Սարգսեանցը, որ ՞8 թիւն աւարտել է Թիֆլիսի առաջին իգական գիմնազիան և գալով Երևան ստանձնել է Ս. Հռիփսիմեան դպրոցի տեսչուհու պաշտօնը, որը նա վարել է մինչև սոյն թիւ ուսումնական տարվայ՝ վերջը։

Օրիորդական պրոգիմնազիայի անհրաժեշտ պահանջը զգալով, օրիորդը դիմել է՞ կովկասեան ուսումնարանական հոգաբարձուին և թոյլտուութիւն խնդրել բանալու։ Մնացեալ տարի ապրիլին ստացվեց թոյլտուութիւնը, իսկ այսօր ահա տեղի է ունենում գիմնազիայի հանդիսաւոր բացումը։ Դպրոցում առ այժմ սովորում են 83 աշակերտուհիներ, որոնցից 74 հայեր, 8 ռուս և մէկը կաթօլիկ։ Ուսուցչուհիների կազմը բաղկացած է 6 հոգուց, որոնք բոլորն էլ գիմնազիաւարտ են։

Դպրոցի բացման հանդէսը նշանակված էր ժամի 11-ին։ Հասարակութեան բանիմաց և դպրոցական մասով հետաքրքրվող դասակարգը խմբերով դիմում էր նորաբաց պրոգիմնազիան տեսնելու դպրոցը և լսելու ուսուցչուհիների և մասնաւոր մարդոց ճառերը դպրոցի առիթով։ Հանդիսին ներկայ էին նաև նահանգապետը, տեղիս յաջորդը, քաղաքագլուխը, ուսպրավայի անդամները, ուսուցչական սեմինարիայի տեսուչը, օրիորդաց և տղայոց գիմնազիաների տեսչուհին և տեսուչը, ժողովրդական դպրոցների տեսուչը, քաղաքիս միւս դպրոցների ուսուցչուհիները և ուսուցիչները, բոլոր ծխական դպրոցների հոգաբարձուները, աշակերտուհիների ծնողները և շատ պատուաւոր քաղաքացիներ և քաղաքուհիներ։ Դպրոցի շինութիւնը զարդարված էր դրօշակներով։ Ժամը 12-ն էր, երբ ռուս և հայ հոգևորականութիւնը սկսեց դպրոցի բացման օրհնութիւնը, որից յետոյ գերապատիւ յաջորդը խօսեց, որ նոր բացված դպրոցը պէտք է աշխատէ կրօնական բարեպաշտութիւն—Աստուածապաշտութիւն տարածել աշակերտուհիների մէջ, որպէսզի նրանք էլ նոյն հոգով կրթեն իրանց մանուկներին, երբ մայրեր կը դառնան։ Նահանգապետը, շնորհաւորելով դպրոցի բացումը, յոյս յայտնեց, որ ապագայում նա կը ծաղկի, աւելի ու աւելի կը բարգաւաճի ու առաջադիմի շնորհիւ ներկայ տեսչուհու, և շուտով գիմնազիա կը դառնայ։

Ժողովրդական դպրոցների տեսուչ պ. Սմիրնովը, դրուատելով օրիորդի ասկնութիւնը և արժանաւորութիւնը, որ ժողովրդի ներկայ դժուար կացութեան ժամանակ յանձն է առնում բաց անել դպրոց։ Վերջում նա յոյս յայտնեց, որ այդ դժուար գործը իր ուսերի վրա կը տանի օրիորդը առանց վհատվելու։ Նոյն միտքը յայտնեց և հոգաբարձութեան նախագահ պ. Սմօլօյակին շեշտելով, որ Երևանի քաղաքի համար անհրաժեշտ պահանջ էր դարձել իգական նոր գիմնազիա ունենալը։ Թէև գիմնազիան մասնաւոր է, բայց և այնպէս նա էլ ունի նոյն իրաւունքները ինչ որ ունեն պետական դպրոցները։ Յուսով ենք, որ յարգելի տեսչուհին գործը կը դնի օրինակելի հիմունքների վրա։ Աշակերտուհիների քառաձայնային «Մեր հայրենիք» երգով փակվեց հանդէսը։ Հանդիսականները գոհ սրտով ցրվեցին աջողութիւն և այժմ մաղթելով նորաբաց դպրոցի կառավարչուհիներին։

Գ. Աղայազեան

ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆԻՑ

(Նամակ Խմբագրութեան)

Շամշադին, 19 նոյեմբերի

Շատ և շատ խնդրում եմ «Մշակի» խմբագրութիւնից տալ մօտակայ համարներից մէկում հետեւեալը։ Ղազախի գաւառի Շամշադինի մասի Ղըզի գիւղում ես այսօր հիւր էի։ Առաւօտեան մօտ ժամի 9 ին, եկաւ մի սուրհանդակ գիւղիս դաշնակցականների կողմից, կանչեց Սարգիս Բաբասեանցին, որի տանը ես հիւր էի։ Կանչողը ասաց, որ գիւղամիջումը նրան կանչում են։ Նա պատրաստվեց գնալու։

Ես էլ պատրաստվեցի գնալու նրա հետ, այն պատճառով, որ ես շատ էի լսել դաշնակցականների ապօրինի գործերի և բռնի արարքների մասին դէպի ժողովուրդը։ Ինձ շատ և շատ գործեր էին պատմել, բայց ես չէի հաւատում, որ անարդարութիւններ կանեն դաշնակցականները, քանի որ ես կարծում էի դրանց իսկական դաշնակցական գործողներ։

Բայց բանից դուրս եկաւ, որ ես եմ սխալված։ Սխալ կարծելով մարդկանց ասածները, սխալված եմ եղել այն պատճառով, որովհետև բացակայ եմ եղել այս գիւղերից։

Հիմա ես ինքս հետաքրքիր եղայ անձամբ գնալ և տեսնել ամենը, թէ ինչ է կատարվում մեր հայրենի գիւղերում։

Հասնելով ժողովականներին, իմացայ բոլորը մանրամասնօրէն։ Իմացայ, որ ի զուր պահանջում են Սարգիս Բաբասեանցից 250 րուբլի փող։

Սարգիս Բաբասեանցը հարցնում է, թէ արդեօք ինչ հիման վրա են ուզում այդ գումարը իրանից, միջամտելով մի քանի գիւղացիներ՝ ասացին պէտք է պատասխանել։ Առաջինն ասաց—թող տայ 150 րուբլի, երկրորդը ասաց—թող տայ 100 րուբլի, իսկ երրորդը վրա բերեց—50 րուբլի թող տայ. իսկ Սարգիս Բաբասեանցը և իր հայրը խնդրում էին չանել այդ անարդարութիւնը. աղերսելով աղաչում էին ժողովականներին։

Դեռ այս խօսակցութեան մէջ էին, երբ լուր բերին, թէ զինուորապետը, այսինքն Գրիգոր Մխիթարեանը իր երեք զինուորներով, Յովսէփ Մխիթարեանի, Պօղոս Սիմէօնեանի և Գրիգոր Ղանազեանի հետ, գնացել էր Սարգիս Բաբասեանցի տունը, որ փողը առնանայ։ Արդեօք ով էր նրան ուղարկել փող բռնանալու և ինչու, ինչ հիման վրա պէտք է առնանար, այդ մեզ յայտնի չէ։

Սարգիս Բաբասեանցի մայրը տեսնում է, որ չորս-հինգ հոգի ներս մտան զոռը և դուրս քշելով երկու ձիերը և եզները, առանց մի որևէ հարցի, տանում են։ Խեղճ կինը միամտաբար դիմում է նրանց առաջը և սկսում է հարցնել, թէ արդեօք ուր են տանում այդ ապրանքները. Գրիգոր Մխիթարեանը պատասխանում է 60-ամեայ կնոջը մի քանի ձեռնափայտի հարուածով։ Խեղճ կինը յետ քաշվելով նորից առաջ է գնում, չը հաւատալով որ իսկապէս այդ հարուածը դիտմամբ կատարվեց, հարցնում է. «Ինչու համար էք մեր տունը քանդում, ծեր էք քշում-տանում մեր ապրանքները օրը կէսօրին»,—կարծելով որ կատակ-թիւն են անում։ Այս անգամ պ. Գ. Մխիթարեանը պատասխանում է այսպէս. «Ջօռով եմ կնո՛ հարևէ, կնոր քցել պէտք է քշեմ»։ Այս խօսքերը վերջացնելուց յետոյ սկսում են ձեռնափայտի սաստիկ հարուածներ խեղճ պառաւ կնոջ գլխին։ Առաջին փորձը ցոյց է տալիս Գր. Մխիթարեանը, և նրան են հետևում զինուորները, մինչև որ անզգայացած փռվում է գետին խեղճ կինը։ Այն ժամանակ Գ. Մխիթարեանը, տեսնելով անզգայացած դիակը գետնին փռված, հեռանում է իր ընկերներով. զինուորներից մէկը սկսում է քշել ապրանքները, որ Գ. Մխիթարեանը ասում է. «Մեր հաստակիքը հասաւ մեզ, մեզ ապրանքը հարկաւոր չէ, գնանք հօրեցը և տղեցն էլ առանալու այսպէս, ինչպէս արինք տանը». թողնելով ապրանքները հեռանում են։

Այդ բոլոր Գ. Մխիթարեանի սրարմունքների ժամանակ, հայր և որդի, այսինքն Աստուածատուր Բաբասեանը և Սարգիս Բաբասեանը, եղել են ժողովականների մէջ, ուր խնդրում էին չանել այդ անարդարութիւնը՝ պահանջել իրանցից 250 րուբլի և թէ ի փոխարէն 250 րուբլու, 50 րուբլի, հեռացնել իրանցից այդ լուծը։

Մէկ էլ տեսանք՝ հասաւ Գ. Մխիթարեանը, հասնելուն պէս հրամայեց զինուորներին անմիջապէս կատարել ասածները՝ ինչպէս պատւիրել էր քիչ առաջ։ Զինուորները բանելով հօր և որդու օձիքից արդէն պատրաստվում էին կատարել հրամանը Գ. Մխիթարեանի, որ նա կանգնած բղաւում էր բարձրաձայն՝ «Ստանալ 250 րուբլին. տուէք... ջարդեցէք... փըչեցէք... սպանեցէք...», և թէ տեսակ-տեսակ հայհոյանքներ էր թափում, բայց և լրագիրը, գիտենք, հայհոյանքի տեղ չէ։ Ես այդ ամենը տեսնում էի և լսում. ես նկատելով մարդկանց կեանքի վտանգը, որ մօտ է սպառնում դրանց, որ այդ անգութները չեն էլ ուզում լսել ոչ մի խօսք, ուստի ինչպէս ասած իբրև փրկանք, մարդկանց կեանքը փրկելու համար, հանեցի 250 րուբլի և տուի Օհաննէս Վարդանովի ձեռքը։ Նա բարձրացնելով փողը ցոյց տուեց, որ արդէն ստացված է։ Եւ նրանք հանգստացան։ Յովհաննէս Զօրանեանը միջամտից ասելով. «Այ Ղըզի գիւղի ժողովուրդ, այս դատ չէ, այլ մի թշնամութիւն է. ամօթ չէ՞ արդեօք ձեզ համար. յետ տուէք այդ փողը». չանցած քիչ ժամանակ, երբ դեռ ժողովականների մէջ տիրում էր մարդկանց, այդ անարդարութեան արարողութիւնը յետ տուեց Օհ. Վարդանեանը 150 րուբլին ինձ, իսկ 100 րուբլին յանձնեց Գ. Մխիթարեանին, որ նա հանգստութեամբ ծալեց դրեց ծոցը և հեռացաւ։ Սարգիս Բաբասեանի մայրը երեկոյեան հազիւ ուշքի եկաւ. ներկայումս խեղճ կինը շատ ծանր հիւանդ է, նրա կեանքը վտանգի մէջ է։ Առողջանալը անյուսալի է։ Պ. պ. դաշնակցականների լուրջ ուշադրութիւնն եմ դարձնում այս վայրենի և անարդար արարմունքի վրա։ Պէտք է մերկացնել և քննել լրիվին և վերադարձնել իմ 100 րուբլի գումարը, որը ես տուած եմ փրկանք հօր և որդու անձին։

Հիմա ես հաստատ հաւատում եմ, որ ուղիղ են այն ամեն պատմուածքները, որ ինձ պատմում էին, և հասկանում եմ շատ անգամ իմ լսած այս խօսքերը։

«Մենք վստահ էինք, որ, Դաշնակցութեան շնորհիւ, կարող ենք ապահով կեանք վարել ներկայ դարերում. բայց ափսոս մեր այդ յոյսը, մեր այդ փափագը մնաց մեր սրտերում ու չիրագործվեցաւ, և մեռնում են հետզհետէ մեր ունեցած յոյսերը»։

Բ. Բարայեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակ»-ի հետեւեալ համարը Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալների տօնի պատճառով լոյս կը տեսնէ երեքշաբթի, դեկտեմբերի 5-ին։

Թիֆլիսի պօլիտեխնիկումի համար հաստատված գլխաւոր կոմիտեի նախագահը երեկ դիմել է Թիֆլիսի քաղաքագլխին խնդրելով հաղորդել իրան, թէ արդեօք քաղաքային վարչութիւնը հնարաւորութիւն չի ունենայ այժմեանից իսկ յանձնել պօլիտեխնիկումի շինութեան համար յատկացրած գումարը Պետական բանկի Թիֆլիսի բաժանմունքին, գլխաւոր կոմիտեի ընթացիկ հաշւով, նոյնպէս և ուղարկել քաղաքային դումայի կայացրած որոշման պատճէնը յիշեալ ինստիտուտին միանուագ և տարեկան դրամական օգնութիւն տալու մասին։

Այսօր, երեկոյեան ժամը 8-ին հասարակական գրադարանի շինութեան մէջ նշանակված է Մոսկվայի կայսերական հնագիտական ընկերութեան Կովկասի բաժանմունքի նիստը։

Մեզ հաղորդում են, որ կիրակի, դեկտեմբերի 3 ին, առաւօտեան ժամը 11-ին, Կովկասի բժշկական ընկերութեան դահլիճում (Ալէքսանդրեան այգի, Ֆեօդրէյվսկի փող.) կայանալու է մի մեծ ընդհանուր ժողով նոր կազմակերպված հայկական դեմօկրատական կուսակցութեան բիւրոյի նախաձեռնութեամբ,

Դեկտեմբերի 3-ին Շուլաւերում բացվում է Թիֆլիսի նահանգական դատարանի նստաշրջանի (сессія) նիստը, քննելու մի քանի ընդհանուր քրէական գործեր։

Թիֆլիսում հիմնվելիք պօլիտեխնիկումի համար կազմված մասնաժողովի անդամ Գ. Մ. Թումանովը նոյն մասնաժողովի յանձնարարութեամբ դիմել է Խարկով պրիվատ-դօցենտ Խարիչկովին՝ խնդրելով կազմել ուսման ծրագիրը և պօլիտեխնիկումի սկզբնական ծախսերի, նաև տարեկան ծախսերի նախահաշիւը։

Դեկտեմբերի 5 ին Թիֆլիսի դատաստանական պալատում նշանակված է Նիկ. Ղօրղանովի և Ֆօգերիձէի գործի քննութիւնը, որոնք մեղադրվում են գործարանատէր Շուրիցից բռնութեամբ փող կորզելու մէջ։ Մեղադրեալներին պաշտպանելու են երդ. հաւատ. Բարաթօվը և Մաղալովը։

Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան համարեա բոլոր բաժանմունքների ծառայողները դիմել են քաղաքային վարչութեանը, պահանջելով ռոճիկները աւելացնել, որովհետև ապրուստը թանկացել է։ Ծառայողները, որոնք ստանում էին, օրինակի համար 18 ական րուբլի ամսական, այժմ պահանջում են 60 րուբլի։ Վարչութիւնը հնարաւոր է ճանաչել համարեա բոլոր ծառայողների ռոճիկները ընդհանրապէս աւելացնել 20⁰/₀-ով։

Թիֆլիսում կազմակերպվել է «Նկարիչների—նաղշքարների պրոֆեսիոնալ միութիւն»։ Միութեան կանոնադրութիւնը արդէն մշակված է և ներկայացրած է վաւերացնելու համար։ Միութեան նպատակն է համախմբել այդ արհեստի բանւորներին պաշտպանելու իրանց պրոֆեսիոնալ շահերը և բարձրացնել իրանց անդամների բարոյական, մտաւոր և տնտեսական մակերևոյթը։ Միութեան անդամներ կարող են լինել նկարիչ-նաղշքար բոլոր բանւորները, առանց ազգի, կրօնի և քաղաքական համոզմունքների խտրութեան։

«Тер.» լրագիրը լսել է, որ «ռուս ժողովրդի դաշնակցութեան» Վլադիկավկազի բաժանմունքը մտադիր է դպրոց բանալ իրան գրագէտ անդամներին գրագիտութիւն սովորեցնելու համար։

Թիֆլիսի նախկին ոստիկանապետ Մարտինովը ուղևորվում է Պետերբուրգ։ («Зн.»)

Գանձակից հեռագրում են «Т. Л.» լրագրին հետևեալը. «Մի անյայտ մարդու ձեռքով սպանվեց քաղաքային հաշտարար դատարանի բաժանմունքի քարտուղար Ռաֆիբէկովի ամուսինը։ Հանգուցեալը լեհուհի էր և մանկավարժութիւն էր ընդունել»։

Երևանում նոյեմբերի 27 ին զինուորական-դաշտային դատարանի դատավճռի համաձայն երևանցի Մաշադի-Բահրամ-օղլու սպանութեան մէջ մեղադրվողներ Մէշէդ-Զաքար-օղլին և Մուխտար-Իսլամ օղլին գնդակահարված են. Թէյմուր-Ալլահ-օղլին 10 տարվայ տաժանակիր աշխատանքի, մնացած երեքը արդար են ճանաչված։

Նոյեմբերի 23 ին Թուրքերի սօցիալ-դեմօկրատական «Հիմմէթ» կուսակցութիւնը մի թռուցիկ է բաց թողել յորդորելու համար Թուրք գործակատարներին, որ անվհատ ու աներկբայ շարունակեն իրանց գործադուլը և միացած ու համբերութեամբ գործեն, որպէսզի յաղթանակը տանեն։

Մօտ օրերս Բունդի պրոֆեսիոնալ դաշնակցութիւնների կօնֆերենցիան մշակել է պայմաններ «Լեհաստանի և Լիտվայի սօցիալ-դեմօկրատների» հետ միանալու համար։

Երևանի արքունական պալատի կառավարիչ է նշանակվում Լենեւսկը, իսկ Երևանի արքունական պալատի կառավարիչը տեղափոխվում է նոյն պաշտօնով Բաքու։

Ինչպէս հաղորդում է «Вѣкъ» լրագիրը, նոյեմբերի 24 ին Կովկասից Մոսկվա են հասցրած 70 քաղաքական յանցաւորներ. բանտարկվածների թւում կան շատ ինտելլիգենտներ։

Մոսկվայի խաղաղ վերանորոգութեան կուսակցութեան կոմիտեն Պետերբուրգից տեղեկութիւն է ստացել, որ դեմօկրատական բարենորոգումների կուսակցութիւնը հնարաւոր չէ համարում խաղաղ վերանորոգչականների հետ բլոկ կազմելու, այլ կարելի է համարում միայն նախընտրական պայքարի ժամանակ մի քանի առանձին անձանց վերաբերմամբ համաձայնութիւն կայացնել։

Նոյեմբերի 24-ին տեղի է ունեցել Մոսկվայում տպարանական բանւորների ժողովը, որտեղ քննվել է Պետական Դումայի ընտրութիւնների վերաբերեալ հարցը։ Որոշել են տալ իրանց ձայնը միայն սօցիալիստական կուսակցութիւններին։

Մոսկվայի քաղաքապետ գեն. Ռէյնբոտը միջնորդել է գեներալ-նահանգապետին զինուորական դաշտային դատարանի յանձնելու գիւղացիներ Միխայլինին, Պօտապովին և Ֆեօդորովին, որոնք զինված յարձակում են գործել Սերպուխովկի մասում գտնվող Բուլատովի տան վրա։ Դէպքը տեղի է ունեցել երեկոյեան։ Բուլատովի տանը հիւրեր են լինում, երբ յանկարծ ներս են խուժում երեք զինված երիտասարդներ կողոպտելու նպատակով։ Տանտէրն ու հիւրերը սկզբում շփոթվում են, բայց իսկոյն սիրտ են առնում և սկսում են յամառ դիմադրութիւն ցոյց տալ։ Սկսվում է գնդակահարութիւն, որի ձայնից օգնութեան են շտապում ժողովուրդը և բռնում են յարձակվողներին։

ԿԱՐՃԵՒԱՆ գիւղից (Օրդուբադ) մեզ գրում են։ Ստացանք Բաքուից պ. Մարգար Աւետիսեանից 230 կտոր գրքեր և գրքոյկներ գիւղի գրադարանի համար։ Նախկին՝ Շուշից պ. Բագրատ Տէր-Սահակեանից ես ստացած 120 կտոր գրքերի հետ միասին մէկ համեստ գրադարան է կազմված։ Խնդրում ենք հեղինակներից, բարերարներից և մեր գիւղացի քաղաքներում գտնվող երիտասարդներից, գրքերով և լրագիրներով օգնել մեր գրադարանին. Մեր գիւղի հասցէն է՝ Черезъ г. Ордубатъ сел. Карчеванъ. Карчеванскому приходскому училищу.

Կազանից «Рѣчь» լրագրին հեռագրում են, որ Պետական Դումայի նախկին անդամ Ալկինի բնակարանում կատարվել է մի տարօրինակ գողութիւն։ Անյայտ մարդիկ մտել են բնակարանը նրա բացակայութեան ժամանակ, և արժէքաւոր իրերը թողած, տարել են Պետական Դումայի ստենօգրաֆիական հաշիւների և գրութիւնների մի մասը։

Նոյեմբերի 25 ին տեղի է ունեցել Մոսկվայի քաղաքային գործերի առանձին ատեանի նիստը, քաղաքապետի օգնական գնդապետ Կորոտկովի նախագահութեամբ, քննելու ժողովրդական ազատութեան կուսակցութեան ակումբների հարցը։ Ձայների մեծամասնութեամբ որոշել են, որ անպայման պէտք է փակել թէ կենտրոնական և թէ շրջանային ակումբները։ Ինչ վերաբերում է այն ակումբներին, որոնց կապը ժողովրդական ազատութեան կուսակցութեան հետ ուղղակի չէ հաստատված, ատեանը անկարելի է համարել նրանց փակել։ Այդպիսով փակված են երկու ակումբ, կենտրոնական և մի շրջանային, իսկ միւսները կը գործեն դարձեալ. սակայն քաղաքապետի օգնականը իրագործումը յետաձգել է և որոշումը ներկայացրել ներքին գործերի մինիստրին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՃԱՊՕՆԱՑԻՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

«Уссур. Ж.» լրագրի ասելով, «Osaka Mainchi»-ի թղթակիցը հեռագրել է Պետերբուրգից, որ ճապօնական դեսպան Մօտօնօն ներկայացրել է ռուսաց կառավարութեանը մի նօտա հետևեալ երեք պահանջներով.

1) Ամուրի բացումը։

2) Թոյլատրել ճապօնական հպատակներին Սիբիրում ունենալ հողային սեփականութիւն։

3) Լիաօդունի թերակղզու վրա պատրաստված ճապօնական գործուածքների վրա տուրքը նշանակել չինական ապրանքների համար սահմանված չափով։

Ռուսական կառավարութիւնը այդ բոլոր պահանջներին պատասխանել է մերժումով հետևեալ պատճառաբանութեամբ.

1) Ամուրի բանալու հարցը կարող է քննվել միայն Ռուսաստանի և Չինաստանի միջև։

2) Ռուսաց հպատակները դեռ ևս հողային սեփականութիւն ունենալու իրաւունքը չեն վայելում Ճապօնիայում։

3) Հնարաւորութիւն չը կայ ստուգելու ճապօնական գործուածքների ծագումը։

«Osaka Mainchi» լրագրի թղթակցի վերոյիշեալ տեղեկութեան հիման վրա, կարելի է կարծել, որ Մօտօնօն մտադիր է ճապօնացիների համար ձեռք բերել Ամուրի վրա ձկնորսութեամբ պարապվելու և ձկնարաններ ունենալու իրաւունքը, թէև,—ասում է լրագիրը,—Պորտսմուտի դաշնագրի մէջ այդ բանը նախատեսված է։

Դաշնագրի մէջ ասված է միայն ճապօնացիների ձկնորսական իրաւունքների մասին Ճապօնական, Օխօտսկի և Բերինգովի ծովերի ռուսաց ջրերում։ Ինչ վերաբերում է գետերի բացմանը, պէտք է ասել, որ այդ դէպքում անպայման պահանջվում է Չինաստանի համաձայնութիւնը նոյնպէս։

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՅԻՑ

(Հայկական կօնցերտը Պարիզում)

Պարիզ, դեկտեմբերի 3-ին

Պարիզի Salle des Agriculteurs-ի մեծ սրահի մէջ շաբաթ գիշեր, դեկտեմբերի 1-ին, տեղի ունեցաւ հայկական, ժողովրդական և եկեղեցական երգերի մի կօնցերտ, Հ. Կոմիտասի կառավարութեամբ։

Կօնցերտը բաղկացած էր երկու մասերից, ժողովրդական և եկեղեցական ներդաշնակութիւն, որոնք ինքը Հ. Կոմիտասը ներդաշնակած էր։

Կօնցերտին մասնակցում էին օր. Մ և Շ. Բաբայեանները, պ. Մուղունեան և Շահ-Մուրադեան։ Իսկ խումբը բաղկացած էր յայտնի Colonne և Lamoureux-ի երգիչներից։

Հայր Կոմիտասը հայութեան համար մի նոր անձնաւորութիւն չէ, նա արդէն նշանաւոր է իր տաղանդով, զարգացած և հմուտ արհեստով։ Նրա ներդաշնակութիւնը քաղցր է և մեղմ, զգայուն և նուրբ, կրթված և տաղանդային, վսեմ և բարձր։ Բայց նրա ներդաշնակութիւնը զուրկ է կորովից, նա չունի énergie։ Այո, դուք լսում էք երբեմն նրա ներդաշնակութեան մէջ կորովի և վսեմ accord-ներ, բայց նա անկարող է իր ձեռքերի, աչքերի և ամբողջ մարմնի շարժումներով ազդել խմբի վրա։

Այսպէս «Սիփան սարերի քաջերը» երգը, որը մի վրէժխնդրութեան, քաջութեան և կռւոլի երգ է, խումբը երգում էր համեմատաբար շատ քաղցր, մեղմ և դանդաղ։

Հայր Կոմիտաս ինքը ևս կրկնեց եկեղեցական մի քանի կտորներ, շատ խորհրդաւոր և զգայուն կերպով։

Օր. Մարգարիտա Բաբայեանի ձայնը դուրեկան է և քնքոյշ, բայց օրիորդի գլխաւոր յատկութիւնն է երգել արհեստով և ներդաշնակութեան բարձր հմտութեամբ. և եթէ նա մեծ երգիչ չէ, նա շատ մեծ արտիստ է իր մուզիքական զարգացմամբ։

Օր. երգեց «Իմ չինարի եարը» և պ. Մուղունեանի հետ «Հօրրոանը», որը սքանչելի էր, և հասարակութիւնը կրկնել տուեց։

Օր. Շուշանիկ Բաբայեանը դաշնակի վրա ածեց հայկական մի քանի պարեր, որոնք սքանչելի կերպով դաշնակի համար էին փոխադրված. և օրիորդը ածում էր արտիստական հրանայի հմտութեամբ և տակտով։

Պ. Շահ-Մուրադեան, Պարիզի կօնսերվատօրիայի աշակերտ, շատ զգացմամբ և դուրեկան ձայնով երգեց «Կռունկը». Նա երգեց զուտ հայկական մեղեդիով և զգացմունքով և այդ, հասարակութիւնը շատ հաւանեց և կրկնել տուեց։

Խումբը բաղկացած էր մօտաւորապէս 30 հոգուց. չը նայելով որ Պարիզի կօնցերտների ամենալաւ խմբի երգիչներից էր բաղկացած, ունէր պակասութիւններ. գուցէ և ներելի պակասութիւններ, որովհետև պէտք է գիտենալ, որ նրանք ֆրանսիացիներ էին և ոչինչ չէին հասկանում իրանց երգած բառերից, և ինչպէս երեւում է հազիւ 4—5 անգամ փորձ էին արել։

Կօնցերտի կէսին, պ. Չօպանեան մի գրուածք կարդաց, հայկական երաժշտութեան և բանաստեղծութեան վրա. մի երկար շատ երկար գովասանք ֆրանսերէն լեզուով։ Պ. Չօպանեան այնքան շատ է սիրում Հայաստանը, հայկական բանաստեղծութիւնը և երաժշտութիւնը, որ օտարի առջև դուրս գալու ժամանակ, ու ժամանակաւոր մի կողմ է ձգում իր անձնական գաղափարները և սկզբունքները. Նա նոյնիսկ պատրաստ է հակասել ինքնիրան, միայն թէ օտարը լաւ գաղափար կազմի հայութեան վրա։ Դա մի քիչ չափազանցութիւն է։

Բայց այդ կօնցերտում կար մի ուրիշ անձնաւորութիւն, որի վրա ես ուզում եմ կանգ անել մի քիչ: Այդ անձնաւորութիւնը պ. Մուղունեանն է, նա երիտասարդ է և յայտնի Պարիզի ֆրանսիական երաժշտական աշխարհի մէջ:

Նրա անունը կարելի է կարդալ ամեն անգամ Պարիզի արիստոկրատ թերթերի էջերում. նա երգում է օպերայի և Օպերա-կոմիկի ամենայայտնի արտիստների հետ միասին ֆրանսիական մուզիքական ամենաբարձր շրջաններում:

Պ. Մուղունեան թէպէտև դեռ ևս կոնսերվատորի աշակերտ է, բայց նա արդէն մի կատարեալ արտիստ է և մի ténor. Նրա ձայնը կրթված է և մեղմ, ուղիղ և մաքուր, բարձր և ախորժելի, նա երգում է ծայրայեղ զգացմունքով, և նա երբ երգում է Carmen-ից դժուարութեամբ կարող է մարդ ինքնիրան բռնել:

Շատ մեծ մխիթարութիւն է տեսնել մի հայ, որը Պարիզի մուզիքական աշխարհի մէջ այդպիսի մի դիրք ունի, և անտարակոյս, մօտ է այն ժամանակը, երբ Մուղունեանը կոնսերվատորից դուրս կը գայ առաջին մրցանակով:

Ա. Օհանեանց

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

1 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 նոյեմբերի: Նոյեմբերի 22-ից մինչև 28 ներքին գործերի մինիստրութիւնը Սիմբիրի, Պենզենի, Օրենբուրգի և Նիժեգորոդի նահանգներում կարօտեալներին հացով բաւարարութիւն տալու համար՝ գնել է 3500 վագոն հաճար: Սիմբիրի նահանգը 2400 վագոն, Օրենբուրգինը՝ 500, Պենզենինը՝ 600. Պենզենի ատեանին թոյլատրված է գնել 700,000 պուդ հաճար, Նիժեգորոդեանին 600,000, որոնք գնված են Մոսկվայի հացային բորսայի մասնակցութեամբ: Վերև յիշված նահանգներում հացի կարիքը կարելի է կիսով չափ լրացված համարել:

ՎԷՅՄԱՐ, 29 նոյեմբերի: Սօցիալ-դեմօկրատուհի Րօզա Լիւկսենբուրգ դատապարտված է բանտարկելութեան երկու ամսով բանի գործողութիւնների կոչի համար, նոյնպէս և ընդհանուր գործադուլի ճառերի համար:

ՎԱՐՇԱՎԱ, 29 նոյեմբերի: Կէսօրից յետոյ ժամի 5-ին Կալիշեան երկաթուղու Զգրէժ կայարանը մտան 12 զինվածներ, յափշտակեցին դրամարկղը, սպանեցին կայարանում պատահմամբ գտնվող Լէնշիցկի բանտի վերակացուին և անհետացան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 նոյեմբերի: Բօրսային առևտրի և գիւղական տնտեսութեան ներկայացուցիչների առաջին համառուսական ժողովի այսօրվայ նիստին ներկայ էր հացային գործի կառավարիչ Գերբել, որ դիմելով Բօրսային կօմիտետների ներկայացուցիչներին, խնդրեց ցոյց տալ՝ որտեղ կարելի է գնել ցորեն սերմանելու համար Սամարի և Սարատովի նահանգներում: Ներկայացուցիչները պատասխանեցին, որ բօրսային կօմիտետների դերը ներկայ դէպքում սահմանափակվում է միայն մատնացոյց անելով վստահելի ֆիրմաներ, որոնց հետ կառավարութիւնը կարող է մտնել անմիջական յարաբերութիւնների մէջ: Օդեսի կօմիտետի ներկայացուցիչը հաղորդեց, որ տափաստանային գեներալ նահանգապետութեան մէջ կարելի է գտնել երկու միլիօնի չափ փոքրասնկով չը վարակված ցորեն՝ յարմար Սամարի և Սարատովի նահանգներին: Մի քանի կօմիտետների ներկայացուցիչները հաստատում են, որ սերմանելու ցորենի անհրաժեշտ քանակութեան 75% կարելի է գտնել տեղերում: Ժողովը մշակում է կանոններ ժողովների և նրանց խորհուրդների կազմակերպութիւնների համար: 29-ին նոյեմբերի ի պատիւ Բուխարայի էմիրի և նրա ժառանգի կայացաւ հանդիսաւոր նախաճաշիկ արտաքին գործերի մինիստրի մօտ: Ներկայ էին՝ Պ. Ի. Ստոլիպին, զինուորական, ֆինանսական, ճանապարհների հաղորդակցութեան, արդիւնաբերութեան և առևտրի մինիստրները, հողաշինութեան գլխաւոր կառավարիչը, սինօդի օբեր-պրօկուրօրը, գեներալնի շտաբի պետը և ուրիշները:

ՊԱՐԻԶ, նոյեմբերի: «Տան» հաւանում է Պիշօնի ցուցմունքները այն բանի մասին, որ Ֆրանսիան չէ կարող միջամտել Ռուսաստանի ներքին գործերին, որովհետև, յայտնում է լրագիրը, Ռուսաստանը չէ միջամտում Ֆրանսիայի ներքին գործերին: Վայլեանի այն ցուցմունքին, թէ սօցիալիստները համախոհ են ռուսական րէվօլիւցիայի հետ, լրագիրը պատասխանում է, որ Ֆրանսիան դաշինքով կապված է ոչ թէ ռուսական րէվօլիւցիօներներին, այլ ռուսական կառավարութեան հետ: Վերջինս՝ նորերս Մարոկկոյի հարցում ծառայութիւն ցոյց տուեց Ֆրանսիային, որը տածում է դէպի նա երախտագիտութիւն: Այն ճգնաժամը, որ կրում է ռուսական կառավարութիւնը, ամենևին չէ ազատում Ֆրանսիային դէպի նա ունեցած պարտականութիւններից:

1 դեկտեմբերի

ՊԱՐԻԶ, 30 նոյեմբերի: Հռոմից տեղեկացնում են, որ պապը մտադիր է բողոքով դիմել բոլոր պետութիւններին այն բռնութիւնների և կամայականութիւնների առիթով, որ ֆրանսիական կառավարութիւնը գործ է դրել նախկին նուիրակատան արխիւը խուզարկելիս: Պապը իր բողոքի մէջ ցոյց պիտի տայ, որ այլևս պատասխանատու չէ արխիւի մէջ գտնված դոկումենտների ամբողջութեան մասին:

ԵԱՐՕՍԼԱՎԼ, 30 նոյեմբերի: Նահանգական համայնական ժողովը կանոնաւոր ճանաչեց երեկվայ քուէարկութիւնը ժողովի կազմից հրաժարեցնելու համար Պետական Դումայի նախկին անդամներին—իշխան Շախովսկուն, Նեկրասովին և Սկույլկուն: Սօբանեև, Պերեպելօվին և Սօկօլօվ իրաւասուները յայտնեցին, որ երդմնազանցութիւն կը լինէր նրանց կողմից ժողովում մասնակցել դատաստանի տակ գտնվող անձանց հետ, և ցոյց անելով հեռացան ժողովի դահլիճից, որը և փակվեց իրաւասուների օրինական թւի բացակայութեամբ:

ՎԱՐՇԱՒԱ, 30 նոյեմբերի: Վարշաւայի մսավաճառների և աշակերտների խորհրդակցութիւնը աջողվեց համաձայնութեամբ. կալբասատների գործադուլը վերջացաւ. դերձակների գործադուլը շարունակվում է. ագիտատորները փչացնում են նիւթեր և փշրում են ցուցահանդէսի ապակիները. երէկ տեղի ունեցան 4 այդօրինակ դէպքեր:

ՕԴԵՍՍԱ, 30 նոյեմբերի: Նոյեմբերի 29-ին, երեկոյեան 9 ժամին Իցկովչի ծխախոտի խանութը, որ գտնվում է Պրեօբրաժենսկի փողոցում, ներս խուժեցին 8 զինված մարդիկ և յափշտակեցին 200 րուբլի: Ոստիկանական ծառայողները մտնեցան խանութին. դարան կեցած գողերը հրացանաձգութեամբ առաջ բերին շփոթութիւն և անյայտացան: Պատահմամբ՝ սպանված է մի տղայ ամբոխի մէջ, վիրաւորված են մի գորոդօվոյ և մի պահապան: Պարզվում է, որ միջազգային բանկի կողոպտողները չեն կարող օգտվել արժեթղթերով, որովհետև նրանց նօմերները արձանագրված են գրքերի մէջ: Կողոպտվելուց մի ժամ առաջ բանկը փոխադրել էր Նիկօլաեվ 136 հազար րուբլի:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 նոյեմբերի: Սենատը բացատրել է, որ համաձայնական ժողովի այն իրաւասուների մասնակցութիւնը, որոնք կարող են յետոյ փոխվել, ոչնչացնում է ժողովների որոշումների օրինականութիւնը, որովհետև թէպէտև անկանոն կերպով ընտրված՝ իրաւասուները օգտվում են իրաւունքներով՝ մինչև ընտրութիւնների փոփոխութիւնը:

ԳՕՄԵԼ, 30 նոյեմբերի.—Նոյեմբերի 29-ին կայացաւ հողաշինութեան կօմիսիայի նիստը, որին մասնակցեցին շատ հողատէրեր և 100 գիւղացի: Գիւղացիք հաւատով են վերաբերվում դէպի Կռւկօյ-Եաււօպօլսկին, որ պաշտօնապէս առաքված է մինիստրների խորհրդի կողմից: Կօմիսիայի նիստը շարունակվեց 5 ժամ:

ՀՌՈՄ, 30 նոյեմբերի: Պարիզից եկած եպիսկոպոս Մօնտենինին անմիջապէս մեկնեց Վատիկան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 նոյեմբերի: Ենթադրվում է Տվերում կազմել դեկտեմբերի 10-ին վիճակային ժողով հօկտեմբերականների՝ Ա. Ի. Գուչկովի ներկայութեամբ: Հօկտեմբերականների խարկօվեան բաժանմունքը դելեգատներ է ուղարկում Եկատերինօսլաւ՝ վիճակային ժողովին ներկայ լինելու և մտադիր է լրագիր հրատարակելու Խարկօվում: Սամարում և Սիմբիրսկում տեղի ունեցան հօկտեմբերականների նախնական ժողովներ: Եարօսլաւում, հօկտեմբերականների բազմամարդ ժողովում, մի ջերմ ճառ արտասանեց Մոսկվայից եկած պրոֆեսոր Բէլկօվ: Զլատօյօլում կազմակերպվեց առևտրա-արդիւնաբերական կուսակցութեան բաժին, որ բլոկ կազմեց հօկտեմբերականների հետ: «Ռուսական ժողովրդի միութեան» բաժին բացվեց Կնեազգինինում, Սամարում, Սումախում, Բերեզան գիւղաքաղաքում՝ Պօլտավայի նահանգի. Կիեվում կազմակերպվել է հարաւ-արևմտեան երկրի ընտրողների ընկերութիւն: Ռուս մարդկանց նորերս տեղի ունեցած ժողովից յետ՝ «ռուսական ժողովրդի միութեան» բաժիններ բացված են Կիեվեան նահանգի գրեթէ բոլոր գաւառներում, իսկ Մինսկի նահանգում բացված են բաժիններ բոլոր գաւառներում:

ԼՕԴԶ, 30 նոյեմբերի: Զգրեժ կայարանի վրա յարձակվելիս մասնակցել են 20-ից աւելի մարդ. կողոպտված է 970 րուբլի:

ՎԱՐՇԱՒԱ, 30 նոյեմբերի: «Վայրեն» կոչված փողոցում պահապան-գործակալները կամենում էին ձերբակալել մի քանի կասկածելի անձանց: Տեղի ունեցաւ երկուստեք հրացանաձգութիւն. վիրաւորված և ձերբակալված են 2 հրէայ տէրրօրիստներ:

ԲԵՐԼԻՆ, 30 նոյեմբերի: Բիւլօվ րէյխստագում երկար ճառով յայտնեց, որ լրացուցիչ կօմիտետի մերժումը ընդունելի չէ: Աֆրիկայում զօրքերի պակասեցնելու հետևանքը կարող է լինել ոչ միայն հարաւային կօլօնիայի կորուստը, այլ և տեղական ժողովրդի ընդհանուր վրդովմունքը սպիտակների դէմ. խնդիրը կայանում է այն բանի մէջ, որպէսզի գործ դնել վերջին ճիգ և վերադարձնել կօլօնիստներին խաղաղութիւն և հանգստութիւն: Չեմ կարող թոյլ տալ, ասաց Բիւլօվ, որ րէյխստագը տէրը վճիռ արձակէր ֆինանսական քաղաքական և պետական նկատմամբ, բայց եթէ նա սխալվէր, այն ժամանակ ես, իբրև կայսերական քաղաքականութեան ղեկավար, պատասխանատու գերմանական ժողովրդի և պատմութեան առաջ, չեմ կարող ստորագրել կապիտուլացիաները րէյխստագի առաջ: Սօցիալ-դեմօկրատները և կենտրոնի ներկայացուցիչները հրաժարվում են ընդունել կառավարութեան առաջարկութիւնը: Քուէարկութիւնից յետ՝ Բիւլօվ վեր է կենում և կարդում կայսերական դեկրետը րէյխստագի արձակման մասին (որոտալից ծափահարութիւններ): Րէյխստագի նախագահ Բալլեստրեմ յայտարարում է ի պատիւ կայսրի «ուրա». րէյխստագի բոլոր անդամները ուրախութեամբ մասնակցում են,

ԲԷԼԳՐԱԴ, 30 նոյեմբերի: Այսօր տօնեցին հարիւրամեայ յօբելեան Թուրքերից ազատվելու առիթով: Քաղաքում՝ դրօշակներ, պալատում պաշտօնական ընդունելութիւն: Հրատարակվեց մինիստրիայի վճիռը զինուորական դատաստանի պատժից ազատութեան մասին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 նոյեմբերի: Կարմիր խաչի գլխաւոր վարչութիւնը մինչև այժմ փոխադրել է անբերրիութիւնից վնասված տեղեր 1,368,380 րուբլի: Գլխաւոր վարչութեան դրամարկղում այժմ կայ 1,133,866 րուբլի:

Արդարադատութեան մինիստրը նկատելով մամուլի վերաբերեալ գործող օրէնսդրութիւնների մէջ բաց տեղ և գտնելով, որ նա զերծ չէ տպագրական խօսքի ազատութեան դէմ գործուածներից, օրինակի համար, այն դէպքերում, երբ յանցաւոր գործողութիւնները ներկայանում են իբրև նմանելու արժանի օրինակ, առաջարկեց մինիստրների խորհրդին գործադրել 133 յօդուածը նոր քրէական օրէնքով, որը պատժում է բանտով մինչև ութ ամիս, և ձերբակալութեամբ մինչև երեք ամիս, կամ տուգանքով 300 րուբլի, յանցաւոր գործողութիւնների շարադրութիւնները ճառերի մէջ ջատագովելու համար, միևնոյն պատիժը տրվում է այդօրինակ գովասանական շարադրութիւնները տարածելու կամ հրապարակապէս ցոյց տրված լինելու համար:

ԲԵՐԼԻՆ, 30 նոյեմբերի: Այսօր Բիւլօվ արտասանեց մի ճառ, որով ապացուցանում էր, որ անհրաժեշտ է բաւարարութիւն տալ բոլոր կառավարչական պրօեկտներին Աֆրիկայի կօլօնիաների վերաբերութեամբ: 178 ձայների մեծամասնութեամբ ընդդէմ 168-ի մերժվեցին Աֆրիկայի հարաւ-արևմտեան կօլօնիաների լրացուցիչ կրեդիտները: Կանցլերը կարդաց կայսրի հրամանը րէյխստագի արձակման մասին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 նոյեմբերի: Պետերբուրգի ազգաբնակութիւնը քաղաքային վարչութեան հաշւով, 1900 թիւ նոյեմբերի 15-ից, 1,480,000 ի վրա աւելացել է 230,000 հոգի:

ԼՕՆԴՕՆ, 30 նոյեմբերի: Հրատարակված է Տրանսվալում կօնստիտուցիա մացնելու հրամանը: Օրէնսդիր խորհուրդը բաղկացած է 15 անդամից, որոնք նշանակվում են նահանգապետից, քանի որ ընտրութիւնների վերաբերեալ կանոնադրութիւն չէ հրատարակված. իւրաքանչիւր հինգ տարին խորհրդի կազմը նորոգվում է: Օրէնսդիր ժողովը բաղկանում է 49 անդամից: Վիճաբանութիւնների ժամանակ թոյլ են տրվում հաւասարապէս անգլիական և հոլլանդական լեզուները:

ՌԻԳԱ, 30 նոյեմբերի: Վերջին ժամանակ ձերբակալված կօմմունիստների գործը քննելով՝ ոստիկանութեանը աջողվեց երևան հանել դարձեալ մի պահեստ զէնքերի—34 մաուզերի հրացան, 400 փամփուշտ: Ձերբակալված են չորս հոգի:

ԲԱԽԱՐԵՍՏ, 30 նոյեմբերի: Պատգամաւորների պալատում, պատասխան ուղերձի քննութեան ժամանակ, օպպօզիցիան յայտնել է, որ թագաւորի հիւանդութիւնը աչքի առաջ ունենալով՝ նրա հանգստութիւնը չը վրդովելու համար հրաժարվում է քննադատել գահական ճառը և չէ մասնակցում վիճաբանութիւններին: Մինիստր նախագահի ճառից յետոյ, ուղերձի բնագիրը ընդունվել է միաձայն:

ՕԴԵՍՍԱ, 30 նոյեմբերի: Վերսկսվել են հացի բեռնաւորութեանը աշխատանքները օտարերկրեայ շոգենաւերում:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ

ԽՈՒՇԱԿ ՄԽԻԹԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերի

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան, վեներական (սիֆիլիս) միզասեռ. հ.:

Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և ներարդային:

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժու. հին:

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.:

Ի. Կ. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.:

ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.:

Գ. Ե. Գուրգենօվ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան:

ԻՐԻԿՈՒՆՆԵՐԸ

Ա. Մ. ՓՈՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.:

Վճարը 50 կ.: չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

Լոյս տեսաւ և վաճառվում է

„ՍԵՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ"

կազմ. ՆԵՏԱՐ

Բովանդակութիւն

1) Սեռական գիտելիքների անհրաժեշտութիւնը. 2) Գիտելիքներ սեռական կեանքի մասին. 3) Սեռական գործարաններ. 4) Սեռական կեանքի գործողութիւնները. ա) Երազախառութիւն, բ) Դաշտան, գ) Սեռական յարաբերութիւն, դ) Յղիութիւն, ե) Ծննդաբերութիւն. 5) Յաւելուած.—Երեխայի խնամատարութիւնը. գինն է 20 կոպէկ: Փոմաբով գնողներին 30% զիջ: Երևանից դուրս 20% զեղջ. ճանապարհածախսը մեր հաշւին. Դիմել Типографія Х. Айвазянца.

(շ.) 1—5

Փանձակում տեղի ունեցած ընդհարումների պատճառով ես տեղափոխեցի իմ կենտրոնական ՀԻՒՐԱՆՈՑՍ շքեղ կահկարասիներով Թիֆլիս, Պուշկինսկի փողոցի վրա № 23, պրավօսլաւնի հոգևոր սեմինարիայի դիմաց

„ՆՕՄԵՐԱ ՑԵՆՏՐԱԼ"

անունով: Գները 70 կոպէկից մինչև 2 րուբլի: Ամսական ցանկացողների հետ առանձին պայմաններով:

Ալէքսանդր Ցարութիւնօվ

(հ. կ. ե.) 40—100

ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

Մաղաթ Պետրոսեանի

«Շուշան», «Լիսիր», «Հոփփսի», «Պահակը», «Բանւորը», «Մի կտոր հացի համար», «Կապոյտ շապիկը», Արցունքներ», «Վիշտ», «Տխուր պատմութիւն»: Բոլորը մի գրքոյքում 111 երես, գինն է 30 կ.: Արտատպված «Մուրճ»-ից, «Արշալոյսից» և «Ընկերից»:

Վաճառվում է տեղական գրավաճառների մօտ և «Փարոս» պաւիլիօնում: Հեղինակի հասցէն՝ Бебутовская № 42. կամ Авчалы Յ. Ж. Д.:

(շ. շ.) 4—10

ԳԼԽԻ ԹԵՓԸ

ոչնչացնելու և մազերը ամրացնելու համար սապոն

№ 3374

ծախվում է ամենայն տեղ:

Բրիւսելի 1905 թիւ ամենաբարձր գինը:

Т-во Парфюм. фабрики провизора

А. М. ОСТРОУМОВА.

МОСКВА

(շաբաթ օր.) 9—10

Յ. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ

I

ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ

ՌՈՒՍԵՐԷՆԻՑ ՀԱՅԵՐԷՆ

Գինը 8 ր., կազմով 8 ր. 60 կ., 9 ր. և աւելի, նայած կազմին:

II

ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ

ՀԱՅԵՐԷՆԻՑ ՌՈՒՍԵՐԷՆ

Լոյս տեսաւ ԵՐԿՐՈՐԴ պրակը՝ Ամբողջ բառարանի բաժանորդագինը 5 ր., առաջին բառարանի բաժանորդների և գնորդների համար 4 ր., Թիֆլիսում դիմել «Գուտտէնբէրգ» գրախանութին, իսկ գաւառներից պէտք է ուղղակի հեղինակին դիմել. ТиФлисъ. А. Дагбашяну.

III

Գրպանի բառարան ռուսերէնից հայերէն: Բաժանորդագինը 2 ր. 50 կոպ.:

Ծանօթ. Յաւելուածը ուշ լոյս կը տեսնէ:

Բագուի բաժանորդները 9 րդ պրակը կը ստանան «Сотрудникъ» գրախանութից:

1—1

Լոյս տեսաւ

„ԵՐԿՐԻ ՁԱՅՆԸ"

շաբաթաթերթի ինններորդ համարը

Հետևեալ բովանդակութեամբ

Ո՞ւմ համար են ստեղծուել դաշնագրերը — Տ. Զաւէն

Թուրք կեանքի և գիտակցութեան շուրջը. — Տ.Զ.

Արևելեան հարցի կրած էվօլիւցիան, Բերլինի կոնգրեսից ի վեր (1875—1906) — Ութէն Պիէռօ

Վոսփորի ափերէն, Մինիստրները, IV, (Աբդիւլրահման փաշան, դատարան մինիստր) — Ուրկամ

Հիմնական կանոնադրութիւն «Միութիւն և Յառաջդիմութիւն» օսմանեան կուսակցութեան

Մամուլի շուրջը

Երիտասարդ-Թիւրքերի մի կոչը

Թղթակցութիւններ

I Նամակ Կ. Պօլսից — Լէ. Պիրամիդ

II » Տրապիզոնից — Պոնտացի

III » Էրզրումից — Արշակունի

Էրզրումի ջարդուածներու ատատը (VI) — Ճեմիլ

Կարծիքներ (Թիւրքահայ հարցի մասին) IV — Վ. Գ.

Նախշուն Իժը (վերջ) — Թեռակկը

Լուրեր

ՀՐԱՒԷՐ

Առաջիկայ դեկտեմբերի 3-ին, կիրակի, առաւօտեան 11 ժամին, Կաթուղիկէ ս. Աստուածածնի (ս. Գէորգ) եկեղեցումը լինելու է ժողով՝ Նոր երէցփոխ ընտրելու համար, ուստի այս երրորդ և վերջին անգամին հրաւիրում եմ 22 տարին լրացած երկսեռ բոլոր ծխերին, որ շտապեն ներկայ լինել յիշեալ եկեղեցումն ընտրութեանը մասնակցելու:

Ընտրութիւնը կանոնաւոր է համարվելու, ներկայ գտնվող երկսեռ ծխերի թիւը որքան և լինի:

Գործակալ ա. մ. Թիֆլիսի՝

Գրիգոր աւագ քհ. Մանդակունի

(չ. հ. ու. շ. կ.) 4—5

ԲԺԻՇԿ

Ա. Մխիթարեանց

Մասնագէտ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 10—12, երեկոյեան 6—8: Կանանց համար 12—1 ժամը:

Սօլօլակ, անկիւն Բէհբութեան և Գաւկեվիչի փողոցների, № 33/15:

(ա. օ.) 67—100

ԲԺԻՇԿ

Լեւոն Օհանջանեան

Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: Կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպէկտի և Կաղեաշկայեա փողոցի, տուն Թամամշեանի: Մուտքը Կաղեաշկի փողոցից № 2.

(ա. օ.) 286—300

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1907 Թ.

ԵՐԿՐԻ ՁԱՅՆԸ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ,

որ նուիրուելու է մասնաւորապէս Թիւրքահայկական հարցի լուսաբանութեանը. ծանօթացնելու է իր ընթերցողներին հայ և Թիւրք կեանքի քաղաքական, հասարակական, գրական ու գեղարուեստական զանազան երևոյթների հետ. պէտք է ձգտի հայ-Թիւրքական համերաշխ գործակցութեան:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

	Տարեկան	Վեց ամսուան
Թիֆլիս	3 ր. 50 կ.	2 ր. —
Գաւառ	4 ր. —	2 ր. 25 կ.
Ամերիկա	2,00 դոլ.	1,50 դոլ.
Արտասահման	13 ֆր.	7 ֆր.

Խմբագրութեան հասցէն՝—Тифлисъ, редакція «Ерկри Дэайнъ», Грибоѣдовская, № 16, д. Зубалова, կամ Tiflis, rédaction de l'«Erkri Dzaïn», Griboedovskaya, № 16, maison Zoubaloff.

Թիֆլիսում կարելի է բաժանորդագրուել և «Գուտտենբերգ» գրավաճառանոցում:

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ ԵՒ ՎԱՃԱՌՒՈՒՄ ԵՆ Ե. ԹՈՓՉԵԱՆԻ ԽՄԲԱԳՐԱԾ

„ԼՈՅՍ"

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ 1907 Թ.

ԳՐՊԱՆԻ ՕՐԱՑՈՅՑԻ յաւելուածը պարունակում է՝ 1. Չափեր, ժամանակի և չափերի համեմատութիւն, 2. Տեղեկութիւններ բանւորական օրավարձի, նօտարական օրէնքերի, մուրհակի, դրօշմատուրքի, բնակարանների հարկի, կապակցութեան տուրքի մասին, 3. Փոստ, հեռագիր, հեռախօս, 4. Երկաթուղի և նաւագնացութիւն, անցագիր, 5. Զինւորագրական կանոններ, 6. Հետաքրքրական, 7. Զւարճալիք, 8. Ցիշատակարան: Առանձին յօդւածներ՝ I բժշկական-առողջապահական—1. Զարկերակների կոշտանալը—բժշ. Բ. Նաւասարդեանի, 2. Ով և ինչպէս է նպաստում վարակիչ հիւանդութիւնների զարգացմանը—բժ. Արտ. Շխեանի, 3. Մտաւոր յոգնածութիւն—բժ. Ա. Բուդաղեանի, 4. Եղունգ կրծելը—դոկտ. Կ. Փաշայեանի: II Հայկական հարցի շուրջը—1. Հայերը, Ա. Զիպրիանիի, 2. Հայերի միութիւն—Անատոլ-Ֆրանսի, 3. Հայ յեղափոխական գաղափարը—Րօլլէն Ժակմէնի, 4. Սուլթանի քաղաքականութիւնը—Է. Դիլլօնի, 5. Հայկական հարցը և դիւանագիտութիւնը—Լեպսիուսի, 6. Հայրենիքի համար—Շովիէրի, 7. Արթուն—Ժ. Ժօրէսի, 8. Սօցիալիստական բիւրօյի կոչը հայկ. հարցի մասին: III Հող եւ ազատութիւն—1. Գիւղացու ցաւերը—Ե. Թ., 2. Գիւղացիներն ինչպէս կարող են հող ստանալ—Ա. Պեշեխանօվի, 3. Գիւղացիներ միացէք—Պրամպօլինիի: IV Բանւորական հարցերից—1. Ինչ է կապիտալը—պրոֆ. Կարիշևի, 2. Կարծիքներ արհեստակց. միութիւնների մասին, 3. Արհեստակց. միութիւնների նպատակը—Ե. Թ., 4. Գործադուլ, 5. Ի՞նչ է բոյկոտը—Ե. Թոփչեանի, 6. Լեբել—Ե. Թ., 7. Աշխատանքի տօնը—Ե. Թոփչեանի: V Կենսագրական- 10 գունատիպ պատկերներով՝ 1. Քր. Միքայէլեան—Պիէր Քիյառի, 2.Ո՞վ էր Քրիստափորը—Ե. Թ., 3. Պետօ, 4. Մկրտիչ Աւետիսեան, 5. Մարտիկ, 6. Սրբնոտ տասնամեակ, 7. Վանեցիների ժաննա-դ. Արկը, 8. Բարկէն Սիւնի, 9. Լէյտենանտ Շմիդտ, 10. Սպիրիդոնօվա, 11. Իբսէն, 12. Դերասան Պետրոսեան: VI Հրապ. հարցերից—1. Ի՞նչ է սօցիալիզմը—Ե. Թոփչեանի, 2. Աշխատաւորի ազգասիրութիւնը—Նօվօտօրժսկու, 3. Աւտօնոմիա, 4. Ի՞նչ է ֆէդերացիան—Նօվօտօրժսկու, 5. Կանանց հարցը—Ա. Բեբէլի, 6. Ազգային հարցի գործօնները—Կ. Կաուցկու:

ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԻ առաջին երեսները բացի օրաց. բաժնից պարունակում է 1. Ընդհանուր և հայկական մանրամասն ժամանակագրութիւն, 2. Ընտիր մտքեր, 3. Հայկական և օտարազգի առածներ, 4. Ցիշատակարան: Երկրորդ երեսներում 1. Ռուսաստանի յեղափոխական էջերից (մանրամասն ժամանակագրութիւն), 2. Նշանաւոր եւրոպացիները հայկական խնդրի մասին, 3. Մեծ մարդկանց վերջին խօսքը. 4. Եւրոպայի սօցիալիստները հայկական խնդրի մասին, 5. Նշանաւոր գիւտեր, 6. Հայ-Թուրքական ընդհարումները (մանրամասն ժամանակագրութիւն), 7. Հետաքրքիր թւեր ու տեղեկութիւններ, 8. Սասուն—Մուշի կռիւներից, 9. Պետական Դումայի թւերով, 10. սուլթանների կեանքից, 11. Ազգ, լեզու և հայրենասիրութիւն (զանազան կարծիքներ), 12. Հայդուկի երգերից, 13. Մեր հարևանի կեանքից ու գրականութիւնից. վրացինոր գրականութիւնը (մի շարք պատկերներով), Թուրքերի ծագումը, Իսլամական կրօնը, 14. Հետաքրքրական, 15. զւարճալիք, 16. Կանանց հարցի անցեալից, 17. Խոհարարական խրատներ Մօլօխօվեցի, 18. Մարդակազմութիւն բժ. Ա. Բուդաղեանի, 19. Քաղցածների երգերից Ա. Ահարոնեանի, 20. Աշխատանք և վարձագին Ա. Բախի, 21. Քանի ժամ աշխատել Զէյդելի 22. Ընտրողական իրաւունք Նօվօտօրժսկու, 23. Ինչ է հայրենասիրութիւնը Կ. Կաուցկու, 24. Նոր պատգամներ Կարմելիւկի, 25. Հասարակական տնտեսութիւն Ա. Բախի 26. Ազատութիւնները.Ի. Նօվօտօրժսկու, 27. Զրոյցներ աշխատանքի մասին պրոֆ. Կարիշևի, 28. Յեղափոխականների մաքերից.—Քր. Միքայէլեանի, 29. Խրատներ հայդուկներին Անդրանիկի, 30. Հիւանդութիւններ և ասպիկներ. բժ. Ա. Բուդաղեանի, 31 Դպրոցական առողջապահութիւն դոկ. Կ. Փաշայեանի, 32. Մանր հատուածներ. Ուղղակի և և անուղղակի շարքեր Ֆեդերովիչի:

ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ. Պատի օրացոյցի յաւելւածը պարունակում է անցեալ 1906 թ. մրցանակաբաշխութեան հետևանքը և մրցանակաբաշխութիւն 1907 թ. համար:

ՏԱԽՏԱԿԸ. Պատի օրաց. տախտակը ներկայացնում է 6 գոյնով տպած «Մայր Հայաստանի» պատմական պատկերը և բանւորական ու գիւղացիական էմբլէմները:

ԳՆԵՐԸ. Գրպանի օրաց.—20 կոպ., պատինը—50 կոպ., գումարով գնողներին ձեռնտու զեղջ: Պահանջների հետ պէտք է ուղարկել կանխավճար, գոնէ արժէքի մի մասը:

ԴԻՄԵԼ՝ Тифлисъ, Мадатовская, № 5. Е. Топчяну, իսկ արտասահմանից Tiflis (Caucase) Madatowskaia № 5. E., Toptshian և «Փարոս» գրականու, Երևա. հրա., Նիկ. Մատինեանին:

(կ. հ.) 1—7

Ֆրանսիական Շոգենաւային Ընկերութիւն

«ՄԵՍՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ» — «MESSAGERIES MARITIMES»

5/18-ին դեկտեմբերի մեկնելու է Բաթումից, երեկոյեան ժամը 4-ին, առաջնակարգ «La Crimée» շոգենաւը, հանդիպելով՝ Տրապիզոն, Սամսոն, Կ. Պօլիս, Դարդանէլ, Զմիւռնիա, Պիրէյ, Քանէյ, Մարսէյլ, Հավր և Լօնդօն:

Ուղղակի հաղորդակցութեան տոմսակները մինչև Պարիզ, նոյնպէս և մինչև Շանգհայ (Չինաստանում), Հեռաւոր Արևելք գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում պակասեցրած գներով:

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան Թիֆլիսի գործակալ պ. Վ. Ցակոբեանին, Նախկին Արծրունու գալէրէյում թիւ 127 գրասենեակը, հեռախօս՝ թիւ 608: Գրասենեակը բաց է 9—1 ժամը ցերեկվայ և 5—6-ը երեկոյեան, բացի կիրակի օրերից: 1—1

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Մ. Գ. Շերմազանեան

Ընդունում է հիւանդներին ամեն օր 9 ժ.—2 ժ. և երեկոյեան 4—7 ժամը: Սոլոմոնեան հրապարակ, տ. Դիլբարեանի № 7, դեղ նոր մագազինը:

(ե. Ա.) 83—100

ԲԺԻՇԿ

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

Մասնագէտ ներքին և երեխայոց հիւանդութիւնների, ատամնաբոյժ և ներքին հիւանդութիւնների: Ընդունելութիւն ամեն օր 12—1 ժ. ցեր. և 5—6 երկ.

Միխայլովսկի պր. Ճավճավաձէի № 36

թիւն դարձէք գործարանի դրոշմի վրա „Пишущій Амуръ"

❀ Օգտակար ընծայ առաջիկայ տօներին ❀

ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՀԱՏՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՊԱՀԵՍՏ

ԳՐԱՄՄՕՖՕՆՆԵՐԻ

ԵՒ

ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐԻ

ԱՄԲՈՂՋ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՄԱՐ

Ստացված են մեծ թւով ամենավերջին նորութիւններ պլաստինկներ, զանազան լեզուներով:

ԳՆԵՐԸ ԱՐԺԱՆ ԵՆ

Պատվերները կատարվում են և պիեսների ցուցակները ղրկվում են ձրի

TRADE MARK
GRAMMOPHON

„ԳՐԱՄՄՕՖՕՆ"

Ակցիոներական ընկերութեան

Թիֆլիսի բաժանմունքը

Թիֆլիս, Գոլովինսկի պրօսպեկտ, տ. № 9.

Հեռագրի համար հասցէն Тифлисъ „Граммокомпания".

(շ. շ.) 5—25

Ապարատներ և պլաստինկաներ գնելիս ուշադրու-

Ապարատներ և պլաստինկաներ գնելիս ուշադրութիւն դարձէք գոր-